

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Նախագիծ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Մինչև 2018 թվականը Վարչապետի աշխատակազմը գործել է որպես «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 2-ի համար 726-Ն որոշման: Այնուհետև 2018 թվականի մայիսի 10-ի «Վարչապետի աշխատակազմ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի համար 500-Ա որոշման համաձայն ստեղծվել է Վարչապետի աշխատակազմը: Վարչապետի աշխատակազմը գործում է օրենքների, Կառավարության աշխատակարգի և իր կանոնադրության հիման վրա: Վարչապետի աշխատակազմն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների ու հանձնարարականների կատարման վերահսկողությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի բյուջեի, Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի վերակազմավորման, Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության և քաղաքացիական ծառայության խորհրդի լուծարման և միավորման արդյունքում ձևավորվել է Վարչապետի աշխատակազմի 2018 թվականի բյուջեն, որը կազմել է 22,515,140.4 հազար դրամ, իսկ 2018 թվականին ծրագրերով փաստացի կատարված ծախսը կազմել է 18,217,775.0 հազար դրամ:

2019 թվականին Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց և ամբողջությամբ անցում կատարվեց ծրագրային բյուջետավորմանը, ինչի արդյունքում մի շարք ծրագրեր և ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներ միավորվեցին կամ դադարեցվեց դրանց իրականացումը:

2017-2019 թվականներին վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվել և իրականացվում են հետևյալ ծրագրերն ու միջոցառումները՝

- «1033» **«Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին»:** Այս ծրագրի նպատակն է ցուցաբերել աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման և հասարակական սեկտորի զարգացմանը նպաստող նյութերի ստեղծման, միջոցառումների, կլոր սեղանների, հանրային քննարկումների դասընթացների կազմակերպման նպատակով: Ծրագրի շրջանակներում 2019 թվականից միավորվել են երեք միջոցառում:

1. «11001» **«Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին»:** 2018 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառմանը հատկացվել է 136,849.8 հազար դրամ, որը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի համապատասխան ծրագրից: Ծրագրին հատկացված ֆինանսական միջոցները չեն օգտագործվել պայմանավորված քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և արհմիությունների ֆինանսավորման համար հայտերի չներկայացման հետ: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 186,849.8 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և արհմիությունների՝ վերջիններիս կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա:

2. «12001» **«Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին»:** Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին աջակցությունը տրամադրվում է համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգամշակույթային կազմակերպությունների համակարգող խորհրդի որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N47 արձանագրային որոշման 32-րդ կետի պահանջների:

2017 և 2018 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառմանը հատկացվել և ծախսվել է 20,000.0 հազարական դրամ: Միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել 11 հասարակական կազմակերպությունների, որոնք իրականացրել են հետևյալ միջոցառումները:

- կրթական միջոցառումներ՝ կիրակնօրյա դպրոցներ, դասընթացներ, գրա-կանության, մամուլի և դիտակտիկ նյութերի գնում, ուսման վարձեր, մայրենի լեզու դասավանդող ուսուցիչների խրախուսում, մրցույթների հաղթողների պարգևատրումներ:

- մշակութային միջոցառումներ՝ համերգներ, ցուցահանդեսներ, գրական երեկոներ:

- տոնախմբություններ՝ ազգային և պետական տոներ և հիշատակի օրեր նշելիս կազմակերպված ճաշկերույթներ, ֆուրշեթներ, զանազան նվերներ, համերգներ:

- զանազան քննարկումներ՝ սեմինարներ, երկխոսություններ, մրցույթներ:

- գրասենյակային ծախսեր՝ գրենական պիտույքներ, ինտերնետ և հեռախոսային կապ, կայքէջ, տարածքի վճար, տեղեկատվական ծառայություններ, աջակցություն ՀԿ-ների մասնաճյուղերին:

- տրանսպորտային ծախսեր՝ այցելություններ դեպի ազգային հուշարձաններ, այցելություններ տարբեր մարզերի ազգակիցներին, ուղևորություն ճամբար, գործուղում:

2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է նույնքան գումար: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել թվով 11 ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների՝ վերջիններիս կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա:

3. «12002» «Աջակցություն կուսակցությունների դաշինքներին» Միջոցառման շրջանակներում աջակցություն է ցուցաբերվում ընտրությունների արդյունքում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին՝ ցուցաբերվող աջակցության բաշխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա: Աջակցություն ստացող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ֆինանսավորման հայտերը ստանալուց հետո միայն փոխանցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բաշխված ֆինանսական միջոցները: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 103,538.7 հազար դրամ: «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2018 թվականի ընտրություններում 3 եվ ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին եվ կուսակցությունների դաշինքներին աջակցություն ցույց տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N-122-Ա որոշմամբ 2019 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցները բաշխվել են ընտրությունների արդյունքում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքների միջև:

- «1074» «Հանրային կարծիքի ուսումնասիրություններ»։ Ծրագրի շրջանակներում իրականացվում է մեկ միջոցառում, որը 2020 թվականից այլև չի իրականացվի:

1. «11001» «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտություններ»։ 2017 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառմանը տրամադրվել և ծախսվել է 123,278.0 հազար դրամ: 2017թ. իրականացրել են՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) թեմայով 4, Համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment) թեմայով 3 և Կյանքի որակի (Quality of Life Index) 1 հետազոտություններ: 2018 թվականին նշված միջոցառման իրականացման համար հատկացվել է 123,278.0 հազար դրամ, իսկ միջոցառման շրջանակներում փաստացի կատարված ծախսը կազմել է 62,475.1 հազար դրամ: 2018 թվականին ծրագրում կատարվել են փոփոխություններ՝ պայմանավորված ծրագրի դադարեցմամբ՝ պատվիրատուի և կատարողի միջև պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման պայմանագրի փոփոխությամբ: Ծրագիրն իրականացրել է «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ ՍՊԸ-ն: 2018թ. իրականացվել են՝ Համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment) վերաբերյալ 1 և Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) թեմայով 3 հետազոտություններ: Նշված հետազոտական նախագծերը և դրանց արդյունքները զեկուցվել են Հայաստանի Հանրապետության վարչապետին և հրապարակվել են Հայաստանի Հանրապետության կառավարության կայք-էջում՝ <http://gov.am/am/announcements/> բաժնում: Հետազոտությունները հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի բարեփոխումների ռազմավարության մշակման համար: 2019 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 123,278.0 հազար դրամ: 2020 թվականին ծրագիրը չի իրականացվի:

- «1078» «Աջակցություն մարդասիրական ծրագրերին»: Ծրագրի շրջանակներում իրականացվում է մեկ միջոցառում:

1. «11001» «Պետական աջակցություն տեղական և օտարերկրյա կազմակերպությունների կողմից իրականացվող մարդասիրական ծրագրերին»: Միջոցառումը նախատեսվել է «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ չվերթի մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացման համար: 2017 թվականին միջոցառման շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 9,371.08 հազար դրամ: 2018 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 10,000.0 հազար դրամ, միջոցառման շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 8,384.8 հազար դրամ: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսերը պայմանավորված են չվերթների օդանավերի թռիչքների սպասարկման ծառայությունների փաստացի ծախսերով: 2017 թվականի համեմատ 2018 թվականին ծախսերը նվազել են 986.3 հազար դրամով, որը պայմանավորված է կատարված 2 հատուկ չվերթների օդանավերի թռիչքների սպասարկման փաստացի ծախսերի նվազումով: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 10,000.0 հազար դրամ, որը նույնպես կուղղվի բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ չվերթի մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացմանը:

- «1091» «Հանրային իրազեկում»: Ծրագրի շրջանակներում իրականացվում են չորս միջոցառում:

Ծրագիրն իրականացվում է լուծելու հետևյալ խնդիրները՝

- Հայաստանում, սփյուռքի համայնքներում, արտերկրում Հայաստանի մասին լիարժեք և հավաստի տեղեկատվության մատչելիության ապահովումը,
 - Տեղեկատվության միջոցով արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունն ու կապի ամրապնդումը,
 - Հասարակական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների վերաբերյալ իրադարձությունների լուսաբանումն ու տարածումը:
- Ծրագրի իրականացումն ուղղված է հետևյալ նպատակներին՝
- Տեղեկատվության տարածման միջոցով մերօրյա իրականության, հայ ժողովրդի գրական-մշակութային ժառանգության տարածումը և հանրահռչակումը,
 - Հայոց պատմությանը, մշակույթին, հայ մեծերին նվիրված հաղորդումների, հոդվածների, ակնարկների և լրագրության այլ ժանրերով նյութերի պատրաստումն ու հրապարակումը:

1. «11001» «Հանրային իրազեկման ապահովում»: Միջոցառումն իրականացնում է 2018 թվականից՝ «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: 2018 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 581,440.3 հազար դրամ, որից կատարված փաստացի ծախսերը կազմել են 541,356.0 հազար դրամ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝ հայկական տպագիր, էլեկտրոնային, հեռարձակվող մամուլի, Ադրբեջանի առցանց (ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն) մամուլի, տարածաշրջանի երկրների առցանց (վրացերեն, պարսկերեն, թուրքերեն, արաբերեն) մամուլի, Ռուսաստանի և արտերկրի ռուսերեն մամուլի, արևմտյան երկրների առցանց (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, իտալերեն) մամուլի մշտադիտարկումներ ամենօրյա ռեժիմով, տեղեկատվական հոսքերի վերլուծություն և պարբերական ռեժիմով ամփոփիչ տեղեկանքների պատրաստումներ, Ղարաբաղյան հիմնախնդրի, Հայոց ցեղասպանության հիմնախնդրի, հայ-թուրքական հարաբերությունների հետազոտում, Ադրբեջանի հիմնախնդիրների կարգավորման գործընթացի ուսումնասիրություններ և տեղեկատվական սպասարկում, արտաքին քաղաքական գործընթացների, սպասվող կամ իրականացված գործողությունների հանրամատչելի ներկայացում, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողություններ, Հայաստանի Հանրապետության Նախագահի, վարչապետի գործունեության տեղեկատվական սպասարկում, անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, քաղաքական և ընտրական գործընթացների ուսումնասիրություն և տեղեկատվական սպասարկում, Սփյուռքի կառույցների և Սփյուռքի մամուլի գործունեության ուսումնասիրություն և տեղեկատվական սպասարկում և փորձագիտական եզրակացությունների, վերլուծական տեղեկանքների, քաղաքական ամփոփագրերի պատրաստում, Կառավարության առաջնահերթ ոլորտներում հիմնախնդիրների և դրանց վերաբերյալ տեղեկատվական

հոսքերի ուսումնասիրություն և տեղեկատվական սպասարկում, Սոցիալական ցանցերի ուսումնասիրություն և փորձագիտական եզրակացությունների, վերլուծական տեղեկանքների, քաղաքական ամփոփագրերի պատրաստում, արտաքին հարթակներում խնդրահարույց հարցերի շուրջ հայկական տեսակետի առաջնդում, Հայաստանի Հանրապետության շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մոնիթորինգ և վերլուծական նյութերի պատրաստում, զանգվածային լրատվամիջոցների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների և կառույցների գործունեության հետազոտություն, խորհրդատվության ապահովում, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների տեղեկատվական սպասարկում (ասուլիսներ), քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում, Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ հետ կապերի հաստատում, տեղեկատվական-թեմատիկ գրքերի, բրոշուրների թողարկում, թարգմանություններ, Հայաստանի ԲՈՒՀ-ում Կենտրոնի փորձագետների ներգրավում ուսումնական պրոցեսում, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում, ամփոփագրերի պատրաստում, Քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսուցողական նյութերի պատրաստում և ուսումնական ծրագրերի իրականացում, Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները լուսաբանող հաղորդումների պատրաստում, փաստագրական վավերագրական ֆիլմի արտադրություն, Օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչների Հայաստան մեդիա տուրերի կազմակերպում:

2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 733,555.6 հազար դրամ:

2. «11002» **«Պետական մամուլի հրատարակում»** միջոցառմամբ նախատեսված հատկացումներն ուղղվում են 2 անուն՝ «Հայաստանի Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի հրատարակմանը: Այս միջոցառումը հնարավորություն է տալիս ազգաբնակչությանը հայերեն և ռուսերեն տեղեկատվություն ստանալ: 2018 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցներից կատարված փաստացի ծախսերը կազմել են 69,297.4 հազար դրամ, իսկ 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 83,156.9 հազար դրամ:

3. «11003» **«ԱՊՀ երկրներում հեռուստառադիո ծրագրերի հեռարձակում»** միջոցառումը հնարավորություն է տալիս ազգաբնակչությանը ԱՊՀ երկրներից տեղեկատվություն ստանալու և ԱՊՀ երկրներում այն տարածելու: «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի համաձայն, «Միր» ՄՀԲՀ Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի ֆինանսավորումը չի ավելացել, պահպանվել է 2018 թ.-ի ֆինանսավորման չափով և գումարը մասնաճյուղին տրամադրվել է դրամաշնորհի տեսքով՝ համաձայն 2019 թ.-ի փետրվարի 15-ին կնքված դրամաշնորհի տրամադրման N 88 պայմանագրի, այնինչ, ըստ էության այն իրենից ներկայացնում է պետության կողմից տրամադրվող մասնաբաժին: Ուստի, հետագայում բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածները ձևավորելիս անհրաժեշտ է անդրադառնալ վերոնշյալ հարցին: Ըստ «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերություն ՓԲ ընկերության կանոնադրության բաժնետեր պետություններից յուրաքանչյուրը պարտավոր է ֆինանսավորել «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերություն ՓԲ ընկերության գործունեության ապահովման համար անհրաժեշտ ծախսերի իր մասնաբաժինը: Բաժնետեր պետություններից յուրաքանչյուրի վճարման ենթակա պետական մասնաբաժնի չափը որոշվում է «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերություն ՓԲ ընկերության գործունեության ապահովման համար անհրաժեշտ տարեկան նախահաշվով հաստատված ծախսերի և «Հաշվարկային բանալի/Расчетный ключ» արտադրյալին: Յուրաքանչյուր բաժնետեր պետության համար «Հաշվարկային բանալին/ Расчетный ключ» որոշվում է բաժնետեր բոլոր պետությունների բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ տվյալ բաժնետեր պետության բնակչության տեսակարար կշռով: 2017 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցներից կատարված փաստացի ծախսերը կազմել են 159,545.4 հազար դրամ: 2018 թվականին հատկացվել և ծախսվել է 175,500.0 հազար դրամ, 2019 թվականին ևս տրամադրվել է 175,500.0 հազար դրամ:

4. «11004» **«Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ»** միջոցառումը հնարավորություն է տալիս բնակչությանը, ՁԼՄ-ներին և պետական հիմնարկներին ստանալ տեղեկատվություն, ապահովել պատմական նշանակություն ունեցող նյութերի պահպանումն և արխիվացումը: 2018 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված

միջոցներից կատարված փաստացի ծախսերը կազմել են 80,707.3 հազար դրամ, իսկ 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 96,848.8 հազար դրամ:

• «1132» «**Քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացում**»: Ծրագիր շրջանկաներում իրականացվում է մեկ միջոցառում:

1. «11001» «**Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում**»: 2016-2018 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար վերապատրաստման գումարը հատկացվել է քաղաքացիական ծառայողների թվականակի 1/3-ի հաշվարկով (2500 քաղաքացիական ծառայողի համար), քանի որ նախկին օրենքով յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող առնվազն երեք տարին մեկ պետք է վերապատրաստվեր: Վերապատրաստման համար գումար հատկացվել է վերապատրաստման 72 ժամյա ծրագրի հաշվարկով: «Քաղաքացիական ծառայության մասին» գործող օրենքով քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպում է կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները: Քաղաքացիական ծառայության մասին գործող օրենսդրությամբ վերապատրաստման արդյունքում քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N3-Ն որոշմամբ սահմանված հավելվածի համաձայն քաղաքացիական ծառայողի անհատական ծրագրով սահմանվում է տվյալ տարվա համար անհրաժեշտ կրեդիտը՝ քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատման արդյունքի հիման վրա: Քանի որ միջին հաշվարկով քաղաքացիական ծառայողների կատարողականի արդյունքները 81%-94% է, միջինը մեկ քաղաքացիական ծառայողի հաշվով հաշվարկվում է 25 կրեդիտ, որից մոտ 60%-ը մասնագիտական վերապատրաստումների համար, 40%-ը կոմպետենցիաների համար, հետևաբար կոմպետենցիաների վերապատրաստման արդյունքում քաղաքացիական ծառայողը միջին հաշվով պետք է ստանա 10 կրեդիտ (25x40%): Կրեդիտները սահմանվում են ելնելով դասընթացների կարևորությունից, բարդությունից և ծավալից: 10 կրեդիտ ստանալու համար քաղաքացիական ծառայողը պետք է մասնակցի կոմպետենցիաների վերաբերյալ առնվազն 8 ժամ տևողությամբ առնվազն 2 վերապատրաստման (16 ժամ): 2019 թվականին Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին հատկացվել է 9,405.8 հազար դրամ 700 քաղաքացիական ծառայողի վերապատրաստման համար: Նշված գումարը հաշվարկվել է վերապատրաստման 72 ժամյա ծրագրի համար, հետևաբար մեկ քաղաքացիական ծառայողի մեկ ժամի արժեքը 2019 թվականին կազմել է 186.6 դրամ:

• «1136» «**Հայաստանի Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում**»: Ծրագիր շրջանկաներում իրականացվում է յոթ միջոցառում:

1. «11001» «**Ծառայությունների, ծրագրերի համակարգում**»

2017 թվականի փաստացի կատարված ծախսը կազմել է 2,264,359.9 հազար դրամ: 2018 թվականին նշված ծրագրի իրականացման համար հատկացվել է 4,238,878.2 հազար դրամ, իսկ միջոցառման փաստացի կատարված ծախսը կազմել է 3,731,238.3 հազար դրամ: 2018 թվականին 2017 թվականի համեմատ բյուջեի հատկացումներն ավելացել են պայմանավորված օրենսդրության շրջանակներում վարչապետի աշխատակազմի ձևավորմամբ: Ձևավորման արդյունքում ավելացել են աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները, վարձակալության, արտասահմանյան գործուղմների գծով, ներկայացուցչական, շենքերի և կառույցների, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման, գրասենյակային նյութերի համար նախատեսված ծախսերը, այլ ծախսերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմից տեղափոխված «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի համար նախատեսված սուբսիդիայի գումարը: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 4,564.942.6 հազար դրամ:

2. «11002» «**Օրենսդրության իրավական ակտերի կարգավորում**»: Միջոցառման գործունեությունը սկսվել է 2016 թվականի ապրիլի 15-ից Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 294-Ն որոշման հիման վրա: Միջոցառման նպատակն էր Հայաստանի Հանրապետության կարգավորող

նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատման, հստակեցման և պարզեցմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումը, նոր կարգավորող օրենսդրական նորմերի ուսումնասիրությունը, դրանց սահմանման նպատակահարմարության վերլուծությունը և ազդեցության գնահատումը: 2017 թվականին միջոցառման դրամարկղային ծախսերը կազմել են 91,429.5 հազար դրամ: 2018 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել և ծախսվել է 91,367.9 հազար դրամ, իսկ 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացմանը հատկացվել է 110,332.7 հազար դրամ: Միջոցառումը կիրականացվի մինչև 2019 թվականի առաջին կիսամյակի ավարտը, այնուհետև ՕԿԱԳ-ը հանդես կգա որպես Վարչապետի աշխատակազմի ստորաբաժանում:

3. **«11003» «Տվյալների փոխանակման միջգերատեսչական կապի ապահովում»:** Միջոցառման շրջանակներում իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների և ուսումնական հաստատությունների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում: Միջոցառումն իրականացվում է 2017 թվականից և պայմանավորված է միջգերատեսչական ցանցի և համացանցի կենտրոնացված գնմամբ, որի արդյունքում կատարվում է Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների, հանրապետական գործադիր մարմինների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմինների՝ Երևան քաղաքի և մարզային ստորաբաժանումներով, մարզպետարաններ և այլ պետական մարմինների միջգերատեսչական ցանցի և համացանցի կենտրոնացված գնում: 2017 թվականին միջոցառման իրականացման համար միջոցները նախատեղվել են «1136» **«Հայաստանի Հանրապետության վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»** ծրագրի «11001» **«Ծառայությունների, ծրագրերի համակարգում»** միջոցառման (4214) «Կապի ծառայություններ» հոդվածով և կատարված փաստացի ծախսը կազմել է 533,401.6 հազար դրամ: 2018 թվականին ծախսերն առանձնացվել են առանձին միջոցառման տեսքով և միջոցառումը իրականացման համար հատկացվել է 589,080.0 հազար դրամ, որից փաստացի կատարված ծախսը կազմել է՝ 514,000.0 հազար դրամ: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 612,680.0 հազար դրամ:

4. **«11004» «Աջակցություն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը»:** Պետական բյուջեի միջոցներից «Աջակցություն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը» ֆինանսավորումը իր մեջ ներառում է քարտուղարության փորձագետների աշխատանքի վարձատրության ծախսերը և ԱՃԹՆ-ի անդամավճարը: Դրանք կազմակերպությունների մոտ ձևավորվել է ընդհանուր մոտեցում, որ մտահոգված լինելով ԱՃԹՆ-ի շարունակականության, պետության կողմից շահադրժվածության առկայության և գործընթացի հանդեպ սեփականության պատասխանատվության դրսևորման հիմնախնդրով, կառավարությունը պետք է ստանձնի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ֆինանսավորումը պետական բյուջեի միջոցներից (ոչ թե դոնորների ֆինանսավորմամբ) և կոչ են անում այդ ծախսերն արտացոլել պետական բյուջեում: Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի՝ ԱՃԹՆ-ն ներդնող երկրներում նախաձեռնության աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացման համակարգման, փաստաթղթերի մշակման, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբին աջակցության, միջազգային համագործակցության, ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի վարման և մի շարք այլ աշխատանքեր իրականացվում են երկրի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից: Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը ստեղծվել է 2018թ. հունվարին Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո: Առանց քարտուղարության գործունեության Հայաստանը չի ապահովի ԱՃԹՆ-ի համապատասխանող երկիր դառնալու (կարգավիճակը պահպանելու) պարտավորությունը, ինչպես նաև հնարավոր չի լինի ներգրավել ԱՃԹՆ-ի ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: ԱՃԹՆ-ի գործընթացի և ԲԾԽ-ի արդյունավետ գործունեությունը կարևորվում է դոնոր կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության հետ մշակվող այլ ծրագրերում՝ որպես պարտադիր պայման, ինչպես օրինակ՝ Համաշխարհային բանկի մեկ այլ՝ Հանքարդյունաբերության զարգացման ռազմավարության մշակման համար նախապատրաստվող դրամաշնորհային օժանդակության փաստաթղթերում: Բացի այդ, ԱՃԹՆ-ի անդամակցությունից Հայաստանի Հանրապետության դուրս գալը կամ անբավարար գնահատականները բացասական ազդակներ են ոչ միայն արտասահմանյան ներդրողների, այլև միջազգային կառույցների համար: Որպես ԱՃԹՆ-ի անդամ պետության

պարտավորություն ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր անդամ երկիր պարտավոր է վճարել տարեկան անդամավճար, ինչը պարտադիր վճար է և պետք է կատարվի երկրի պետական բյուջեից:

2018 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 23,600.0 հազար դրամ, իսկ ծախսերը կազմել են 23,452.5 հազար դրամ: 2018 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է.

- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության վերաբերյալ հանրային իրազեկման 4 միջոցառում,
- ազգային ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքների թվով 3 նախագծերի կազմում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության տարեկան զեկույցի ներկայացում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության միջազգային քարտուղարությանը,
- իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում,
- իրավական 2 ակտերի նախագծերի մշակում,
- հաշվետվությունների առցանց համակարգի կիրառման թվով 2 ուսուցման կազմակերպում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության 2019-2020թթ. աշխատանքային ծրագրի կազմում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության մեթոդական թվով 4 ուղեցույցների մշակում:

2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 23,600.0 հազար դրամ: Հատկացված գումարն ամբողջությամբ ուղղվում է աշխատանքի վարձատվության՝ 3 հաստիքի համար:

2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվելիք գումարի հաշվարկը ներկայացված է հայտին կից նախահաշվում, որն իր մեջ ներառում է քարտուղարության փորձագետների աշխատանքի վարձատրության ծախսերը:

Համաշխարհային բանկի հետ 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված համաձայնագրի համաձայն ծրագիրն իրականացվելու է մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը, սակայն հնարավոր է վերջնաժամկետի երկարաձգում:

Բանակցություններ են ընթանում նաև դոնոր այլ կազմակերպությունների հետ (ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԶԾ հայաստանյան ներկայացուցչություն, GIZ և այլն) առաջիկա տարիներին Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանը և ընդգրման ընդլայնմանը ուղղված ծրագրերի իրականացման ուղղությամբ:

5. «11005» «Սպասարկման ծառայություններ»: «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 5-ի թիվ 666-Ն որոշմամբ: «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և հիմնական նպատակը.

1. իրականացնում է Կառավարական N 1 շենքի ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող այլ տարածքների ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքները:

2. ապահովում է՝ Կառավարական N 1 շենքի ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող այլ տարածքներում շենքային պայմանների հետ կապված ընթացիկ աշխատանքները:

Նշված որոշմամբ հաստատվել է նաև Կազմակերպության կանոնադրությունը, որի հիմքով «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

- Կազմակերպություններին կից ճաշարանների ծառայություններ և պատրաստի սննդի մատակարարման ծառայություններ.
- Իրեն ամրացված գույքը պետության անունից վարձակալության հանձնելու ծառայություններ:
- Վարսահարդարման աշխատանքներ:

«Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի ֆինանսավորումը կազմել է 258,679.3 հազար դրամ, 2018 թվականի ֆինանսավորումը 276,619.3 հազար դրամ, իսկ 2019

թվականին 462,558.5 հազար դրամ: Ոչ ֆինանսական ցուցանիշների մակարդակով աճը պայմանավորված է սպասարկվող տարածքների ավելացմամբ՝ 33497.6 մ²-ից հասնելով 42988 մ²:

«Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի ծախսերը կազմել են 258,697.3 հազար դրամ, 2018 թվականին՝ հատկացվել և ծախսվել է 276,619.3 հազար դրամ: 2017 թվականի համեմատ 2018թ-ին ծախսերի և ոչ ֆինանսական ցուցանիշների աճը պայմանավորված է սպասարկվող տարածքների ավելացմամբ՝ 33497.6 մ²-ից հասնելով 42988 մ² /Բաղրամյան 24 և 26 հասցեների շինությունների ընթացիկ պահպանման, շահագործման և սպասարկման աշխատանքների ավելացում: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 462,558.5 հազար դրամ:

6. «31001» «**Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում**»: Միջոցառումն իրականացնում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների գրասենյակ» ՓԲԸ-ն: Ինտեգրացիոն շյուզի ապահովման համար ներկայումս կիրառվում են հետևյալ ծրագրային լուծումները՝ Red Hat Enterprise Linux, IBM MQ, AnyConnect License for DC2 Cisco Asa, որոնց լիցենզիաների բաժանորդագրությունը ժամկետային է: Ծրագրի նպատակն է Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի պահպանումը, արդիականացումը և զարգացումն է: Վերջինիս համար ապահովվում է ինտեգրացիոն շյուզի սարքավորման սպասարկումն ու գործունակությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 217-Ա որոշման համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն ճանաչվել է որպես Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում ստեղծված էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի (ինտեգրացիոն շյուզի)՝ Հայաստանի Հանրապետության պետական բաղադրիչի օպերատոր:

2017 թվականից ԵՏՄ թվային գործընթացների շրջանակում «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին վերապահված գործառույթները իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամաշնորհի տեսքով կատարվել են ֆինանսական հատկացումներ: Այս մասին կներկայացվի մանրամասն տեղեկատվություն հաջորդ բաժնում:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն իր ռեսուրսներով ապահովում է նաև պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական համակարգերի միջև փոխգործելիությունը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) խորհրդի՝ 2018 թվականի դեկտեմբերի 5-ի «О требованиях к созданию, развитию и функционированию трансграничного пространства доверия» (1) թիվ 96 որոշման Հավելված 2-ով սահմանվել են այն հիմնական պահանջները, որոնք վերաբերում են «Երրորդ կողմի» հավաստագրման կենտրոնին: Ինչպես արդեն նշել էինք, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հանդիսանում է Հավաստագրման կենտրոն և հետևաբար պատասխանատու է ԵՏՀ խորհրդի որոշումներով սահմանված գործընթացների պատշաճ կազմակերպման համար:

Այդ գործառույթները և պահանջները իրականացնելու համար 2017 թվականից «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն դրամաշնորհի տեսքով ստացել է ֆինանսական հատկացում՝ համապատասխան ծրագրային ապահովումներ և սարքավորումներ ձեռքբերելու համար: Գործընթացները կրել են ոչ մեկանգամյա բնույթ, քանի որ հանդիսանալով Հայաստանի Հանրապետության պետական բաղադրիչի օպերատոր՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն պետք է ապահովեր Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում ստեղծված էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի (ինտեգրացիոն շյուզի) բնականոն աշխատանքը:

Սեփական ռեսուրսներով ինտեգրացիոն շյուզի աշխատանքները ապահովելու համար սարքավորումներ և ծրագրային ապահովումներ ձեռքբերելը կազմակերպության գործնության վրա կարող էր բացասական ազդեցություն ունենալ (ֆինանսական տեսանկյունից), քանի որ վերջինս ինքնաֆինանսավորվող

¹ <https://docs.eaeunion.org/pages/displaydocument.aspx?s={e1f13d1d-5914-465c-835f-2aa3762eddda}&w=9260b414-defe-45cc-88a3-eb5c73238076&l={8a412e96-924f-4b3c-8321-0d5e767e5f91}&entityid=20224>

կազմակերպություն է, որի սեփական եկամուտները բավարարում են սեփական ոչ մեծ ծախսերը ծածկելու համար:

Հաշվի առնելով ԵՏՀ-ի կողմից նոր պահանջների առաջադրումը և դրանց ինտենսիվ աճող տեմպերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (2017թ., 2018թ.), իսկ հետագայում Վարչապետի աշխատակազմը (2019թ.) տրամադրել է ֆինանսական միջոցներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ որպես վարչապետի լիազորությունների իրականացում տվյալ բնագավառում:

Այս գումարի շրջանակում 2017, 2018 և 2019 թվականների համար կնքվել են Դրամաշնորհի տրամադրման պայմանագրեր՝ կից նախահաշիվներով և միջոցառումների կատարման վերաբերյալ հավելվածներով:

Տարի	Տրամադրող մարմինը	Գումարը (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսը	Կատարված աշխատանքները	Ծանոթություն
2017թ.	Հայաստանի Հանրապետության կառավարություն		48.304.750	1.Ոչ նյութական ակտիվ՝համակարգչային ծրագրի արտոնագիր IBM MQ Processor Value Unit Annual SW Subscription & Support Renewal for 560 users 2. Ոչ նյութ. Ակտիվ՝ համակարգչային ծրագրի արտոնագիր AC-PLS-P-25-T Cisco AnyConnect 25 USER Plus Perpetual License 3. Ոչ նյութ. ակտիվ համ. ծրագրի արտոնագիր՝ Red Hat Enterprise Linux Server Standard և Red Hat High Availability Add-On 4. Ոչ նյութ. ակտիվ համ. ծրագրի արտոնագիր՝ 3 PAR 7200 Adaptive Optimization and reporting Suite licenses 5. Ոչ նյութ. ակտիվ համ. ծրագրի արտոնագիր՝ 3 PAR 7200 Adaptive Optimization and reporting Suite licenses 6. Սերվեր HP Blade Server ProLiant BL460c Gen9, Intel Xeon 2xE5-2650v4, RAM DDR4 4x16GB 7. Ռոութեր ISR4331-AX/K9 Cisco ISR 4331 AX Bundle w/ APP,SEC lic (NIM-ES2-4)	Տնտեսում վերադարձվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե Ձեռք են բերվել նյութական և ոչնյութական ակտիվներ՝ ինտեգրացիոն շղուզի գործառույթների պատշաճ իրականացնելու համար:
2018թ.	Հայաստանի Հանրապետության կառավարություն		93,876,818	1. Red Hat Enterprise Linux Server 2 sockets, 1 physical or 2 virtual nodes Standard Subscription 2.HP Blade Server ProLiant BL460c Gen9 Սերվեր 3.IBM MQ Processor Value	Ձեռք են բերվել նյութական և ոչնյութական ակտիվներ, ծառայություն՝ ինտեգրացիոն շղուզի գործառույթների

				Unit (PVU) Annual SW Subscription & Support Renewal for 560 users Part number: E0256LL 4.Աշխատարձ (ԵԱՏՄ բաժնի 4 աշխատակցի համար)	պատշաճ իրականացնելու համար: Առանձնացվել է աշխատավարձի ֆոնդ՝ ԵՏՀ պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորումը կատարվել է փաստացի կատարված ծախսը ներկայացնելուց հետո
--	--	--	--	---	---

Ինտեգրացիոն շյուզի սպասարկումն ու գործունակությունն ապահովելու համար ներկայում կիրառվում են այնպիսի ծրագրային լուծումներ, ինչպիսիք են Red Hat Enterprise Linux, IBM MQ, AnyConnect License for DC2 Cisco Asa: Արտոնագրերի գործողության ժամկետը մեկ տարի է, ինչը ենթադրում է յուրաքանչյուր տարի պարտադիր ծախս՝ գործողության ժամկետի երկարացման համար: Դրանց արժեքը ներկայացվում է տվյալ տարում ձեռքբերված փաստացի գնով, սակայն կանխատեսվող ժամանակահատվածի համար գնային առաջարկը ներկայացվում է՝ հաշվի առնելով գնաճը:

Բացի արտոնագրերից, ԵԱՏՄ անդամ երկրների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանությունն ապահովող համակարգի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ են սարքավորումներ, որոնց ցանկը յուրաքանչյուր տարի սահմանվում է նորովի:

Ինտեգրացիոն շյուզի պահպանման աշխատանքների համար որպես պարտադիր պահանջ դիտվում է մասնագիտական համապատասխան կազմի առկայությունը: «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն իր միջոցների շրջանակում մինչ 2018 թվականի հոկտեմբեր ամիսը ապահովել է մասնագետների վարձատրությունը, սակայն աշխատանքների ծավալների աճի և լրացուցիչ մասնագետների կարիքների ավելացման պարագայում 2018 թվականին կատարվել է հաստիքացուցակի փոփոխություն և նախատեսվել է առանձին բաժին՝ տվյալ գործառնության իրականացման համար: Բաժնի աշխատողների թվաքանակի ավելացման միտում առկա է՝ ելնելով համապատասխան ԵԱՏՄ պահանջագրերից (ԵՏՀ-ի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան):

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն, հանդիսանալով ԵԱՏՄ ինտեգրացիոն շյուզի (հայաստանյան հատվածի) բնականոն աշխատանքի ապահովման երաշխավորը, ապահովել է ինտեգրացիոն հարթակի մասնակիցների միջև, տրանզակցիաների շաբլոնների համապատասխան ընթացակարգով, էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակությունը և ընթացքում ներկայացված այլ հանձնարարականների պատշաճ կատարումը:

Հատկանշական է, որ անհրաժեշտ ֆինանսական միջոցների գումարները ըստ տարիների սահմանել միանշանակ հնարավոր չէ, քանի որ պահանջները վերոնշյալ կառույցի (ԵԱՏՄ) փոփոխվում են անընդհատ՝ ոչ միայն քանակական, այլ նաև որակական ցուցանիշների տեսանկյունից: Մասնավորապես ավելանում են ոչ միայն նյութական և ոչ նյութական ակտիվներով հագեցվածության, այլ նաև համապատասխան մասնագիտական կազմով ապահովվածության պահանջները:

7. «31002» «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում»: 2018 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 114,606.0 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 102,206.4 հազար դրամի ծախս: 2017 թվականի համեմատ այս ծրագրով բյուջեի հատկացումներն ավելացել են պայմանավորված օրենսդրության շրջանակներում վարչապետի աշխատակազմի ձևավորմամբ: Ձևավորման արդյունքում ավելացել են վարչապետի աշխատակազմի հաստիքները և անհրաժեշտություն է առաջացել գույքի, սարքավորումների ձեռքբերման:

2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 63,033.3 հազար դրամ:

- «1213» «Տեսչական վերահսկողության ծրագիր» Ծրագիրը շրջանակներում իրականացվում է յոթ՝ ծառայությունների մատուցում և չորս՝ պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն միջոցառում:

1. «11001» «Առողջապահության և աշխատանքի ոլորտում անվտանգության ապահովում»: Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի 444-Ն որոշմամբ և չի հանդիսացել պետական կառավարման համակարգի մարմնի իրավահաջորդը: Տեսչական մարմինը կադրային հագեցվածությամբ կազմավորվել է 2017 թվականի տարեվերջ, ուստի իր կանոնադրական գործառնությունների իրականացման մասով ցուցանիշներ և արդյունքներ չի արձանագրել: Տեսչական մարմնի կողմից (նույնիսկ իրավական ակտերի՝ մեթոդաբանության և ստուգաթերթերի բացակայության պայմաններում) 2018 թվականին իրականացված վերահսկողության գործընթացի ժամանակ դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության, բժշկական սպասարկման, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառներում իրականացվել են վերահսկողության գործընթացներ (վարույթներ), որի ընթացքում հարուցվել են 203 վարչական վարույթ, որի շրջանակներում տրվել են 501 առաջադրանք, դիմումի հիմքով կարճված վարույթների թիվը՝ 3, խախտման և իրավախախտման բացակայության հիմքով՝ 86 վարույթ: Նշված վարչական վարույթների շրջանակներում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառվել են թվով 77 տուգանքներ (պատասխանատվության միջոցներ)՝ 134,180.0 հազար դրամ գումարի չափով: Տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվությունը բարձրացնելու և հավանական խախտումները բացառելու կամ նվազեցնելու նպատակով Տեսչական մարմնի կողմից 2018 թվականին իրականացվել են 1,283 խորհրդատվական գործունեություն և իրազեկման աշխատանքներ, որի ընթացքում պարզաբանվել են ոլորտները կանոնակարգող և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավական ակտերի պահանջները: Նշված բնագավառների շրջանակներում իրականացվել են նաև 1,055 կանխարգելիչ գործողություններ, ինչպես նաև կանխարգելիչ գործողություններ իրականացվել են Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում՝ իրականացնելով սանիտարա-կարանտինային հսկողություն (ջերմաչափում, վիզուալ զննում), անհրաժեշտության դեպքում՝ հարցում: ՍԲՀ-ները իրենց հասանելի բոլոր միջոցով մշտապես հետևել են այլ երկրներում համաճարակաբանական իրավիճակին և վարակների առկայության դեպքում նրանց հնարավոր տարածման ուղիներին: Իրականացվել են կանխարգելիչ գործողություններ ժամանած 4,766 օդանավերում, 435,314 ավտոտրանսպորտային միջոցներում, 232 գնացքներում, հսկողության ենթարկված ուղևորների թիվը կազմել են 1,438,846, այդ թվում բեռնատար գնացքների հսկողության ենթարկված 1,536 անձնակազմին, իրականացվել են 620,111 ուղևորների վիզուալ զննում: Հայտնաբերվել են վարակիչ հիվանդության ախտանշաններով 129 անձ և համաճարակային տեսանկյունից անապահով տարածքներից ժամանած 32 ուղևոր: Նշված անձանց նկատմամբ սահմանվել է համապատասխան հսկողություն: Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի 1-ին եռամսյակում իրականացված վերահսկողության գործընթացի ժամանակ իրականացվել են վերահսկողության գործընթացներ (վարույթներ), որի ընթացքում հարուցվել են 515 վարչական վարույթ, որի շրջանակներում տրվել են 285 առաջադրանք, դիմումի հիմքով կարճված վարույթների թիվը՝ 14, խախտման և իրավախախտման բացակայության հիմքով՝ 72 վարույթ: Նշված վարչական վարույթների շրջանակներում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառվել են թվով 171 տուգանքներ (պատասխանատվության միջոցներ)՝ 10,170.0 հազար դրամ գումարի չափով: Տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվությունը բարձրացնելու և հավանական խախտումները բացառելու կամ նվազեցնելու նպատակով Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի 1-ին եռամսյակում իրականացվել են 284 խորհրդատվական գործունեություն և իրազեկման աշխատանքներ, որի ընթացքում պարզաբանվել են ոլորտները կանոնակարգող և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավական ակտերի պահանջները: Նշված բնագավառների շրջանակներում իրականացվել են նաև 518 կանխարգելիչ գործողություններ, ինչպես նաև կանխարգելիչ գործողություններ իրականացվել են Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում՝ իրականացնելով սանիտարա-կարանտինային հսկողություն (ջերմաչափում, վիզուալ զննում), անհրաժեշտության դեպքում՝ հարցում: ՍԲՀ-ները իրենց հասանելի բոլոր միջոցով մշտապես հետևել են այլ երկրներում համաճարակաբանական իրավիճակին և վարակների

առկայության դեպքում նրանց հնարավոր տարածման ուղիներին: Իրականացվել են ժամանաձ օդանավերում կանխարգելիչ գործողություններ 389,037 ուղևորների շրջանում, ավտոտրանսպորտային միջոցներում և 44 գնացքներում հսկողության ենթարկված ուղևորների թիվը կազմել են 265,223, այդ թվում բեռնատար գնացքների հսկողության ենթարկված 950 անձնակազմին, իրականացվել են նաև վիզուալ զննում: Հայտնաբերվել են վարակիչ հիվանդության ախտանշաններով 166 անձ և համաճարակային տեսանկյունից անապահով տարածքներից ժամանած 22 ուղևոր: Նշված անձանց նկատմամբ սահմանվել է համապատասխան հսկողություն:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ Տեսչական մարմինը պետության կողմից պատվիրված ծառայությունների (կանոնադրական գործառնությունների) իրականացման արդյունքում 2017-2019 թվականների ընթացքում ունեցել է թե ֆինանսական և թե ոչ ֆինանսական ցուցանիշների աճ: Այսպես.

Գործառնություն	2018 թվականին 2017 թվականի համեմատ	2019 թվականի 1-ին եռամսյակի 2018 թվականի 1-ին եռամսյակի համեմատ (2018 թվականի միջին ամսական x 3)
Վերահսկողության գործընթացներ (վարույթներ) /հատ/	203	464 [(203 :12 x 3) – 515] կամ որ նույնն է՝ 228%
Պատասխանատվության միջոցներ (տուգանքներ) /հատ/	77	152 [(77 :12 x 3) – 171] կամ որ նույնն է՝ 197%
Կանխարգելիչ գործողություններ /հատ/	1,055	255 [(1,055 :12 x 3) – 518] կամ որ նույնն է՝ 24%
ՍԲՀ-ների կողմից իրականացվող կանխարգելիչ գործողություններ՝ հսկողության ենթարկված ուղևորներ	1,438,846	294,548 [(1,438,846 :12 x 3) – 654,260] կամ որ նույնն է՝ 20%
Խորհրդատվական գործունեություն և իրազեկման աշխատանքները կրում են շարունակական բնույթ և իրականացվում են լայն շրջանակներում՝ ըստ բնագավառների և ըստ տնտեսավարող սուբյեկտների գործառնությունների առանձնահատկությունների դասակարգմամբ: Տնտեսավարող սուբյեկտների ներգրավվածության տեսանկյունից տոկոսային արտահայտությամբ ունեցել ենք մասնակից տնտեսավարող սուբյեկտների էական աճ:		

Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման շրջանակներում:

2. «11002» «Բնապահպանության ոլորտում անվտանգության ապահովում»: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության լուծարման արդյունքում, որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգում գործող առանձնացված ստորաբաժանում ստեղծվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը: Այնուհետև՝ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը դարձել է Կառավարությանը ենթակա մարմին: 2018 թվականի մարտի 23-ի «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն սահմանվել է, որ Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությունը, որի համաձայն

էլ Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վերակազմավորվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի:

2017 թվականին բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն իրականացրել է ստուգումներ 20 կազմակերպություններում, որից 4-ը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականներով, 16-ը՝ գրավոր տեղեկատվությունով: Կատարված տեսչական ստուգումների, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների տեղափոխման և օգտագործման օրինականության պահպանման նպատակով կազմակերպված շրջայցերի և տեսչական մարմնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում հայտնաբերվել է 508 իրավախախտում: Կայացվել է վարչական տուգանքի 325 որոշում՝ 25,470.0 հազար դրամի չափով, ինչպես նաև շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման 386 արձանագրություն՝ 2,200,979.75 հազար դրամի չափով: Կատարված աշխատանքների ցուցանիշներն ըստ ոլորտների հետևյալն են՝

1. Ջրային ռեսուրսների պահպանության ոլորտում հայտնաբերված խախտումների քննության արդյունքում կայացվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 200.0 հազար դրամի չափով:
2. Մթնոլորտային օդի պահպանության ոլորտում հայտնաբերված խախտումների քննության արդյունքում կայացվել է վարչական տուգանքի 36 որոշում՝ 1,950.0 հազար դրամի չափով և շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման 2 արձանագրություն՝ 935.9 հազար դրամի չափով:
3. Թափոնների առաջացման և տեղաբաշխման ոլորտում հայտնաբերված խախտումների արդյունքում 5 բնախախտի նկատմամբ կայացվել է 350.0 հազար դրամի չափով վարչական տուգանք և շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման 1 արձանագրություն՝ 60.0 հազար դրամի չափով:
4. Կենդանական աշխարհի պահպանության ոլորտում իրականացված շրջայցերի արդյունքում կայացվել է վարչական տուգանքի 29 որոշում՝ 2,460.0 հազար դրամի չափով և շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման 24 արձանագրություն՝ 2,260.0 հազար դրամի չափով:
5. Բուսական աշխարհի պահպանության ոլորտում հայտնաբերվել է 351 խախտում, որոնցով 182 քաղաքացի ենթարկվել է 15,770.0 հազար դրամի չափով վարչական տուգանքի և կայացվել է 350 շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման արձանագրություն՝ 2,197,145.8 հազար դրամի չափով:
6. Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմի խախտման համար կայացվել է վարչական տուգանքի 5 որոշում՝ 440.0 հազար դրամի չափով:
7. Հողերի պահպանության ոլորտում իրականացրած շրջայցերի արդյունքում կայացվել է վարչական տուգանքի 19 որոշում՝ 1,140.0 հազար դրամի չափով և շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման 9 արձանագրություն՝ 578.0 հազար դրամի չափով:
8. Ընդերքի ապօրինի արդյունահանման ոլորտում հայտնաբերված իրավախախտումների արդյունքում կայացվել է 7 վարչական տուգանքի որոշում՝ 730.0 հազար դրամի չափով:
9. Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ ճիշտ ներկայացնելու համար վարչական տուգանքի են ենթարկվել 41 կազմակերպություն՝ 2,430.0 հազար դրամի չափով:

2017թ.-ին կիրառված պատժամիջոցներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 25,183,120.0 հազար դրամ գումար:

2018թ.-ի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչարարության արդյունքում արձանագրված իրավախախտումների և բնությանը պատճառված վնասների վերաբերյալ ունենք հետևյալը՝

Հ/Հ	Ոլորտը	Վարչական տուգանքի որոշումների քանակը	Վարչական տուգանք (հազար դրամ)	Շրջակա միջավայրին պատճառված վնաս (հազար դրամ)
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանության	504	44,340.0	1,071,368.0

2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանության	32	3,040.0	11,924.5
3	Մթնոլորտային օդի պահպանության	59	4,350.0	500,621.0
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	35	7,450.0	6,200.3
5	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	4	200.0	0
6	Հողերի օգտագործում և պահպանության	20	1,540.0	28,785.35
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	17	1,650.0	-
8	Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում	97	6,880.0	-
9	Էկոփորձաքննություն	6	600.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ		774	70,100.0	1,618,903.64

Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ ճիշտ ներկայացնելու համար վարչական տուգանքի են ենթարկվել 97 կազմակերպություն՝ 6,880.0 հազար դրամի չափով:

2018թ.-ի ընթացքում Տեսչական մարմնի կողմից հավաքագրվել է վարչական տուգանքներով՝ 50,500.0 հազար դրամ, իսկ շրջակա միջավայրին պատճառված վնասով՝ 153,847.9 հազար դրամ:

2018 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 679,330.4 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 637,366.44 հազար դրամի ծախս, իսկ 2019 թվականին հատկացվել է 874,510.8 հազար դրամ:

3. «11006» «Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում անվտանգության ապահովում»: Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին), ձևավորվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ և իր փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 2018 թվականի սեպտեմբեր ամսից: Ներկայացվող տեղեկատվությունը, ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները վերաբերվում են 2018 թվականի սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին: 2018 թվականի գործունեության տարեկան ծրագիր չի եղել և տեսչական մարմինն առ այսօր դեռևս ամբողջությամբ համալրված չէ աշխատակիցներով (կադրային առաջին համալրումը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերի 03-ից՝ մասնակի), համապատասխան փոփոխություններ դեռևս չեն կատարվել նաև օրենսդրական ոլորտում, այնուհանդերձ, Տեսչական մարմնի վերահսկողությանը վերապահված բնագավառներում թողտվությունից խուսափելու նպատակով վերջինիս կողմից կատարվել են ուսումնասիրություններ, որոնց ընթացքում առավել հաճախ հանդիպող խախտումներն են՝ քաղաքաշինական գործունեության բնագավառում՝ ստացվել և համապատասխան ընթացք է տրվել 42 դիմում-բողոքի և գրության: Դրանք քննարկվել և, ըստ անհրաժեշտության, տեղում կատարվել են ուսումնասիրություններ՝ իրականացնելով քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն: Ներկայացվել է թվով 347 ավարտական ակտի՝ շահագործման (թույլտվություն) դիմում (այդ թվում՝ Երևան քաղաքից՝ 248 հատ, Հայաստանի Հանրապետության մարզերից՝ 99 հատ), որից 203 հատին տրվել է դրական պատասխան, 64 հատին՝ բացասական, մնացածը՝ ընթացիկ, թվով 804 շինարարության թույլտվության դիմում (այդ թվում՝ Երևան քաղաքից՝ 488 հատ, Հայաստանի Հանրապետության մարզերից՝ 316 հատ), տրվել է թվով 19 քանդման թույլտվություն (Երևան քաղաքում՝ 13 հատ, Հայաստանի Հանրապետության մարզերում՝ 6 հատ), թվով 245 Ձև N 2-5 տեղեկանք (այդ թվում՝ Երևան քաղաք՝ 149 հատ, Հայաստանի Հանրապետության մարզեր՝ 96 հատ), էներգետիկայի և էներգատնային վերահսկողության բնագավառում՝ ստացվել է թվով 5 դիմում-բողոք, որոնք քննարկվել և, ըստ անհրաժեշտության, տեղում կատարվել են ուսումնասիրություններ: 2-ի դեպքում խնդիրը լուծվել է, իսկ 3-ը գտնվում են ընթացիկ փուլում: Ուսումնասիրությունների արդյունքում միայն դեկտեմբեր ամսին տրվել է 80 հատ գործարկման եզրակացություն, կատարվել է էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների թվով 5 մասնագիտական քննություն, և կազմվել համապատասխան թվով արձանագրություն, գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառում՝ ստացվել է 2 դիմում-բողոք, որոնցից մեկը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պետական վերահսկողական ծառայության կողմից

Տավուշի մարզի Իջևան համայնքի մասով, մյուսը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարից՝ Արարատի մարզի Վեդի քաղաքում ըստ անհրաժեշտության ստուգում իրականացնելու վերաբերյալ: Վերոհիշյալի կապակցությամբ գրություն է ուղարկվել վարչապետի աշխատակազմ ARPIS ծրագրից օգտվելու թույլտվություն ստանալու համար, տրանսպորտային անվտանգության բնագավառում կազմակերպությունների և քաղաքացիների կողմից կանոնավոր, ոչ կանոնավոր և տաքսամոտորային ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացների նկատմամբ ստացվել է ընդհանուր թվով 24 դիմում-բողոք, որոնցից 6-ն ավտոբուսային և 18-ը՝ տաքսամոտորային փոխադրումների վերաբերյալ: Տրանսպորտային անվտանգության վարչության աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ և դիտարկումներ Երևան քաղաքի տարածքում, ինչպես նաև «Հայավտոկայան» ՓԲ ընկերության ավտոկայարաններում և ե/կետերում: Բարձրացված խնդիրների քննարկման և դրանց լուծման նպատակով տրանսպորտային անվտանգության վարչություն են հրավիրվել թվով 3 փոխադրող կազմակերպության տնօրեններ, որոնց տրվել են անհրաժեշտ, պարտադիր կատարման ենթակա ցուցումներ և հանձնարարականներ: Նշված բոլոր դիմում-բողոքները ստացել են իրենց դրական լուծումները: Կազմակերպվել են միջմարզային ուղևորափոխադրումներ իրականացնող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, վերջիններիս հետ տարվել են իրազեկման աշխատանքներ: Նախկին Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության կողմից կայացված որոշումների և ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից գումարների բռնագանձումների վերաբերյալ հարցերով տրանսպորտային անվտանգության վարչությանը բանավոր դիմած 18 քաղաքացիների տրվել են համապատասխան պարզաբանումներ և բարձրացված հարցերի սպառիչ պատասխաններ: Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում այս պահին գոյություն ունեն դատական և մինչդատական վարույթներ՝ մոտավորապես 14 գործ, մասնավորապես արտադրական վտանգավոր օբյեկտները գրանցված չեն եղել ռեեստրում և տարեկան տեխնիկական անվտանգության փորձաքննություններ չեն անցել, հաճախ տնտեսվարող սուբյեկտների կողմից չեն պահպանվել հրդեհային անվտանգության կանոնները: Մինչ 2018 թվականի դեկտեմբերի 28-ը գործել է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը: Խախտումների հիմնական և առաջնային պատճառը անպատժելիության մթնոլորտն է, քանի որ համապատասխան օրենսդրական փոփոխությունների բացակայության պայմաններում Տեսչական մարմինը հնարավորություն չունի կազմակերպելու ստուգումներ և կիրառելու պատասխանատվության միջոցներ: Այնուամենայնիվ, քառսային վիճակից ու թողտվությունից խուսափելու նկատառումով՝ համապատասխան գրություններ են ուղարկվել նշված ոլորտները համակարգող պետական մարմիններ՝ իրենց իրավասությունների շրջանակներում համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, որոշ դեպքերում՝ օրենքով նախատեսված լինելու դեպքում, կիրառվել են՝ տուգանքներ, մնացած դեպքերում՝ բանավոր նախազգուշացումներ: Իր իրավասության շրջանակներում, 2018 թվականի ընթացքում ծավալել է տնտեսվարող սուբյեկտների իրազեկման միջոցառումներ, օպերատիվ կերպով արձագանքել է հանրության կողմից բարձրացված և լայն արձագանք ստացած խնդիրներին, իրականացրել ակտիվ խորհրդատվական գործունեություն, կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ: Տեսչական մարմնի նախաձեռնությամբ ակտիվ գործունեություն է ծավալվում տնտեսվարող սուբյեկտներին Տեսչական մարմնի ստեղծման ու գործունեության ոլորտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ուղղությամբ, պարբերաբար հրապարակումներ են կատարվում ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ մինչև Տեսչական մարմնի պաշտոնական կայքի վերջնական ձևավորումը, ՀՀ-ների միջոցով իրականացվել է նաև խորհրդատվական աշխատանք՝ ուղղված տնտեսվարող սուբյեկտների իրավագիտակցության բարձրացմանը: 2019 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 953,381.7 հազար դրամ:

4. «11007» «Սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգության ապահովում»: Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ» (այսուհետ՝ Ծառայություն) պետական կառավարչական հիմնարկի իրավահաջորդը: «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող լիազոր մարմինը Տեսչական մարմինն է: Ծառայության կողմից 2017 թվականի ընթացքում մշակվել և ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել են 5 ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության կողմից

հաստատվել են 15 ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ վարչապետի կողմից հաստատվել են 4 ՀՀ վարչապետի որոշումներ, ՀՀ կառավարության քննարկման են ներկայացվել 15 ՀՀ կառավարության որոշման նախագծեր, շահագրգիռ մարմինների կարծիքին են ներկայացվել 16 ՀՀ կառավարության որոշման նախագծեր և Ծառայության պետի կողմից հաստատվել են 13 նորմատիվ հրամաններ: Իրականացվել է՝ 717 ստուգում, 608 դիտարկում, 84 անասնահամաճարակային մշտադիտարկում, 131 հրամանների փոփոխություններ, կասեցումներ և չեղարկումներ, 1805 շրջայց, վերահսկողության ենթակա ոլորտներում գործունեություն իրականացնող 4433 տնտեսավարողների հաշվառում և բազայի ստեղծում: Կայացվել է «Վարչական տուգանք նշանակելու մասին» 339 որոշում, «Անձանց ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին» 76 որոշում, «Արտադրական գործունեությունը կասեցնելու մասին» 133 որոշում, «Արտադրական գործունեության կասեցումը վերացնելու մասին» 79 որոշումներ: 40 դատական գործերով ներկայացվել է Ծառայության շահերը ՀՀ դատարաններում (տարբեր ատյաններում): **2018 թվականի** ընթացքում մշակվել են 6 ՀՀ օրենքի նախագծեր, որոնցից 5 օրենքները հաստատվել են, մշակվել են ՀՀ կառավարության 21 որոշումների նախագծեր, որոնցից 9 որոշումները հաստատվել են: Ծառայության պաշտոնական կայքի միջոցով՝ սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցվել է 14443 տնտեսավարող: Իրականացվել է՝ 574 ստուգում, 556 դիտարկում և մշտադիտարկում, ընդունվել են 514 վարչական վարույթի նյութեր, ենթարկվել են իրավական փորձաքննության, ուղարկվել են ծանուցումներ և նախապատրաստվել վարչական նիստին: 481 վարչական գործերով իրականացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություններ, որի արդյունքում կայացվել է 481 «Վարչական տուգանք նշանակելու մասին» որոշում, կայացվել է «Անձանց ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին», «Արտադրական գործունեությունը կասեցնելու մասին», «Արտադրական գործունեության կասեցումը վերացնելու մասին» 163 որոշումներ:

2018 թվականին միջոցառման իրականացման համար հատկացված միջոցներից փաստացի կատարված ծախսերը կազմել են 637,366.44 հազար դրամ, իսկ 2019 թվականին հատկացվել է 1,142,151.5 հազար դրամ: Տեսչական մարմնի կողմից 2019թ., ինչպես նաև 2020-2022թթ. ժամանակահատվածում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել, քանի որ մարմինը գտնվում է վերակազմավորման փուլում:

5. **«31001» «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»:** 2018 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 8,589.90 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 8,370.22 հազար դրամի ծախս, իսկ 2019 թվականին հատկացվել է 31,567.8 հազար դրամ:

«31002» «Կրթության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 3,000.0 հազար դրամ:

6.

«31003» «Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 1,940.0 հազար դրամ:

7. **«31004» «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»:** Միջոցառման շրջանակներում հատկացված գումարը ուղղված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարողությունների զարգացմանն ու տեխնիկական հագեցվածության բարելավմանը: Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին), ձևավորվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ: Աշխատակիցներով սկսել է համալրվել 2018 թվականի դեկտեմբերի 3-ից: Այժմ Տեսչական

մարմինը աշխատակիցներով համալրված է մասնակի, քանի որ ամբողջությամբ համալրվելու համար չկան համապատասխան պայմաններ՝ գրասեղաններ, աթոռներ, համակարգիչներ և Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ այլ գույք: Միջոցառմանը 2019 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 72,000.0 հազար դրամ անհրաժեշտ գույք և տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար:

• «1018» «Պետական հատվածի արդիականացման ծրագիր»

1. «11001» «ՀԲ աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր»: 2015 Հայաստանի կառավարությունը դիմել է Համաշխարհային բանկին՝ հանրային հատվածի իր բարեփոխումների ռազմավարության համար հետագա աջակցության խնդրանքով՝ ուշադրությունը կենտրոնացնելով նախ՝ հանրային ֆինանսական կառավարման ամրապնդելու վրա՝ ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի մշակմանն օժանդակելով, երկրորդ՝ Կառավարության էլեկտրոնային կառավարման ռազմավարության իրականացմանն օժանդակելու, և երրորդ՝ քաղաքացիական ծառայությունում կարողությունների զարգացման համար շարունակական օժանդակության վրա:

Հայաստանի Հանրապետությունը 2016 թվականի մայիսի 6-ին Համաշխարհային բանկից ստացել է վարկ 21,000.0 միլիոն ԱՄՆ դոլարի չափով «Պետական հատվածի արդիականացման» երրորդ ծրագրի (ՊՀԱԾ3) (8539-AM) ֆինանսավորման նպատակով: ՊՀԱԾ3-ի վերջնաժամկետն է 2020 թվականի դեկտեմբերի 31-ը: Ակնկալվում են քննարկումներ ծրագրի վերջնաժամկետի երկարաձգման:

ՊՀԱԾ3 2019 թվականի մարտի 30-ի դրությամբ իրականացվել և ավարտվել են հետևյալ պայմանագրերը.

Ծրագրի շրջանակներում.

- Իրականացվել են ԷԼ-կառավարման կազմակերպման և ղեկավարման քաղաքական և ինստիտուցիոնալ կառուցվածքի հզորացմանն ուղղված ծառայությունները,

- Մշակվել է Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը, որի միջոցով ազդարարը կարող է անանուն եղանակով կամ իր ինքնությունը բացահայտելու միջոցով հաղորդել տեղեկություններ՝ անելով հայտարարություններ խարդախության և կոռուպցիայի մասին:

2. «11002» «Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում»

3. «32001» «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»: ՊՀԱԾ3 2019 թվականի մարտի 30-ի դրությամբ իրականացվել և ավարտվել են հետևյալ պայմանագրերը.

Ծրագրի շրջանակներում.

- Արդիականացվել է Պետական կառավարման ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կառավարման համակարգը

- Մշակվել է էլեկտրոնային հյուպատոսության համակարգը և ՀՀ արտաքին գործերի նախարարության համար ձեռք են բերվել համապատասխան սարքավորումներ

Ծրագրի շրջանակներում մշակման փուլում է գտնվում.

- էլեկտրոնային նորմատիվ իրավական ակտերի համակարգը, որի անխափան աշխատանքը ապահովելու համար ձեռք են բերվելու համապատասխան սարքավորումներ: Մշակված համակարգի միջոցով նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումից մինչև պաշտոնական հրապարակում ընկած ամբողջ գործընթացը կիրականացվի էլեկտրոնային եղանակով:

- Քաղաքացիների հետ հետադարձ կապի միասնական պորտալը, զանգերի կենտրոնը և Mobile ID համակարգերը (ձեռք են բերվելու համապատասխան սարքավորումներ)

- Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը (ձեռք են բերվելու համապատասխան սարքավորումներ)

4. «32002» «Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում»

• «1214» «Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր»

1. «11001» «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանքարդյունաբերական ոլորտի քաղաքականության ծրագիր»։ 2015-2016 թվականներին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվել է «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» հետազոտությունը, որը վեր հանեց ոլորտում առկա խնդիրները, այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարական ծրագրման բացակայությունը։ Հիմք ընդունելով հետազոտության արդյունքները՝ 2017 թվականին Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացվել է դրամաշնորհ (ԱՃԳԾԱ Հայաստանի Հանրապետության դրամաշնորհ թիվ TFOA5519, «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագիր»), որով նախատեսվում է հանքարդյունաբերության տնտեսական, բնապահպանական և առողջապահական գնահատում իրականացնել և արդյունքների հիման վրա մշակել ոլորտի զարգացման ռազմավարությունը։ Դրամաշնորհի մեկնարկը 2017 թվականի հուլիսի 1-ին է տրվել, ավարտը պայմանագրով նախատեսված է 2020 թվականի ապրիլի 30-ին։ Ծրագրով հատկացված ամբողջ գումարը կազմում է 262,699.2 հազար դրամ, այդ թվում՝ 218,914.0 հազար դրամ Համաշխարհային բանկի դրամաշնորհին է, կառավարության կողմից համաֆինանսավորում՝ 43,785.2 հազար դրամ։ Ծրագիրն ունի չորս բաղադրիչ՝ հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական ազդեցության գնահատում, հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատում, կարողությունների զարգացում և հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակում։ Գնահատման և ռազմավարության մշակման աշխատանքները նախատեսված է մրցույթի միջոցով պատվիրակել մասնավոր ընկերությունների։ Կարողությունների բարձրացման բաղադրիչի միջոցով ենթադրվում է հզորացնել ոլորտային գերատեսչությունների աշխատակիցների կարողություններն ու հմտությունները։ 2017 թվականի ընթացքում մշակվել են ծրագրի երկու գնահատման համար հայտարարվող մրցույթի տեխնիկական առաջադրանքները, ուստի ծրագրի համար միջոցներ չեն հատկացվել։ 2018 թվականի ընթացքում ծրագրի համար նախատեսված 134,339.0 հազար դրամից կարողությունների զարգացման բաղադրիչով օգտագործվել է 1,016.5 հազար դրամ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վ. Գևորգյանի՝ Ժնև կատարած գործուղման համար։ 2018 թվականի բյուջեով և ժամանակացույցով նախատեսվում էր նաև մեկնարկել ոլորտի ազդեցության գնահատման զեկույցների մշակման գործընթացը, ինչը, սակայն, մի քանի պատճառով հնարավոր չեղավ իրականացնել 2018 թվականի ընթացքում։ Մասնավորապես՝ մրցույթների տեխնիկական առաջադրանքի կազմումը և հրապարակումը, մրցույթների արդյունքների ամփոփումը նախատեսվածից երկար տևեցին, քանի որ մրցույթներին հետաքրքրության հայտն էին ներկայացնում պահանջվածից քիչ ընկերություններ, ինչի արդյունքում կարիք եղավ մրցույթները մի քանի անգամ հայտարարել, ապա ոլորտի բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատումն իրականացնել միջազգային մրցույթով։ Ոլորտի տնտեսական ազդեցության գնահատման մրցույթի արդյունքների ամփոփումից հետո հաղթող կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր 2019 թվականի փետրվարին։ Ոլորտի բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման մրցույթի արդյունքներն ամփոփվում են, և հաղթող կազմակերպության հետ նախատեսվում է կնքել պայմանագիր 2019 թվականի մայիսին։ Երկու զեկույցների իրականացման համար հատկացված ժամանակահատվածը վեց ամիս է։

2. «11002» «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ,Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիր»։ 2016-2017 թվականներին ԱՄՆ ՄԶԳ «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի աջակցությամբ իրականացվեցին ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի համար պահանջվող նախապատրաստական քայլերը։ Հայաստանի Հանրապետության՝ ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր ճանաչվելուց հետո մեկնարկեցին երկրի՝ ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի որոշմամբ սահմանված պարտավորությունների կատարման աշխատանքները։ 2017 թվականին աշխատանքները իրականացվում և համակարգվում էին ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում ներգրավված ԱՃԹՆ-ի փորձագետները։ 2017 և 2018 թվականին իրականացվեցին մարզերում իրազեկության բարձրացման աշխատանքներ՝ Երևանում տեղի ունեցան միջոցառումներ և դասընթացներ, Լոռու և Սյունիքի մարզերում կազմակերպվեցին հանդիպումներ ԲՇԽ-ի անդամների և մարզերում շահագրգիռ կողմերի հետ։ 2017 թվականին ՎԶԵԲ-ի լոնդոնյան գրասենյակի կողմից ԱՃԹՆ-ն իրականացնող մի շարք երկրներին

իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին աջակցության տրամադրման ծրագրի շրջանակում ներգրավված տեղական և միջազգային և խորհրդատուների հետ համագործակցության արդյունքում մշակվեց Հայաստանի մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը, ինչպես նաև կատարվեց Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն: Մինչ այդ՝ 2017 թվականի հունիսին, քարտուղարության կողմից արդեն կազմակերպվել էր ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ղեկավար անձնակազմից ներկայացուցչի այց Հայաստան, որի ընթացքում վերջինս կազմակերպեց դասընթացներ նախնական ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ աշխատանքների և իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման հիմնահարցերի վերաբերյալ: 2017-2018 թվականներին Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատան ֆինանսավորմամբ մշակվեցին Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրությունը, Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծությունը և Հայաստանի ԱՃԹՆ-ի հանրային հաղորդակցության ռազմավարությունը: 2017-2018 թվականներին են Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության աջակցությամբ պատրաստվեցին Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը www.eiti.am և հանքարդյունահանող կազմակերպությունների և պետական մարմինների կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը reports.eiti.am: 2018 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրի շրջանակում մշակվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի 1-ին ազգային զեկույցը, որը տեղական և միջազգային հանրությանը ներկայացվեց 2019 թվականի հունվարին կայացած համաժողովի ընթացքում: Հայաստանի ԱՃԹՆ-ի ներդրման և բացահայտված տվյալների նորարական մեթոդները ներկայացվեցին միջազգային ԱՃԹՆ միջոցառումների ժամանակ՝ որպես առաջադեմ ու լավագույն փորձ: 2018 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրի շրջանակում փաստացի ծախսվել է 53,257.7 հազար դրամ: 2019 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրի շրջանակում կմշակվի Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցը, որը տեղական և միջազգային հանրությանը կներկայացվի 2020 թվականի հունվարին նախատեսվող համաժողովի ընթացքում: 2019 թվականին կմշակվի ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրությունը: 2019 թվականին կմշակվեն իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը և կստեղծվի իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովումը, որոնց իրականացման համար Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրով նախատեսվել է 99,743.8 հազար դրամ (1214): Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակներում 2019 թվականին կիրականցվեն մի շարք միջոցառումներ՝ մարզային այցելություններ, տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրություն, Հայաստանի նախավավերացման և վավերացման գործընթացին փորձագիտական աջակցություն, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրության մշակման և լավագույն փորձի փոխանակման աշխատանքներին աջակցություն, Հայաստանը 2019 թվականի հունիսի 17-19 կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային կոնֆերանսին ներկայացման և Ազգային նորարարական էքսպոյում ներկայանալու աշխատանքներին աջակցություն, ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակում տարածաշրջանային համագործակցության և փորձի փոխանակման և այլ աշխատանքներ, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտման թեմայով հանրային իրազեկման միջոցառում: 2020 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրի գործողության ժամկետի հնարավոր երկարաձգման պայմանում կմշակվի Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ զեկույցը, կիրականացվեն հանրային լուսաբանման և կարողությունների զարգացման միջոցառումներ: 2020 թվականին այդ միջոցառումների իրականացման համար նախատեսվում է 57,210.2 հազար դրամ:

- «9007» «Աջակցություն սննդի անվտանգության ապահովման ծրագրերին»: Ծրագիր շրջանակներում իրականացվում է 2 միջոցառում՝ «11001» «Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ» և «31001» «Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեխնիկական հագեցվածության բարելավում»: Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 938-Ն որոշման համաձայն Տեսչական մարմնի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի (այսուհետ՝ ֆոնդ) միջոցները գոյանում են օրենքով սահմանված կարգով՝ ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի գնման և ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար տնտեսավարող սուբյեկտներից գանձված վճարներից, կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորին գործունեության եզրակացություն տրամադրելու համար գանձված վճարներից և տնօրինվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ֆոնդում գոյացած միջոցների 50 տոկոսն օգտագործվում է աշխատողների նյութական խրախուսման, իսկ 50 տոկոսը՝ համակարգի զարգացման և հսկիչ գնումների ֆինանսավորման համար:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Հափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցա-նիշը	Ժամ-կետը	Ցուցա-նիշը	Ժամ-կետը	
Հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավում	1018 Պետական հատվածի արդիականացման ծրագիր	ՀՀ պետական կառավարման համակարգում էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգերի (էլեկտրոնային հյուպատոսության համակարգ, էլեկտրոնային իրավական ակտերի համակարգ, Քաղաքացիների հետադարձ կապի համակարգ, էլեկտրոնային քրեական գործ" համակարգ, Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ, Ոստիկանության օպերատիվ կառավարման էլեկտրոնային համակարգ) ներդրում, հատ	1		6	2021 թ.	

Քաղաքացիական հասարակության զարգացում	1033 Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիությունների	Աջակցություն ստացած նոր քաղաքական կուսակցություններին տոկոսը ընդամենը ընդամենը աջակցություն ստացած քաղաքական կուսակցություններին նկատմամբ Քաղաքական կուսակցություններին կայունության համաթիվ (ԱՄՆ ՄՁԳ)	3.8	2019		2022 թ.	
Հանրային կապերի՝ պետական մարմինների թափանցիկության՝ տեղեկատվության մատչելիության ապահովում	1091 Հանրային իրազեկում	Մշակված չէ					7-7.2 ԿԱՊԸ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ - պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության թվայնացման, միասնական և համապարփակ տեղեկատվական շտեմարանների ձևավորման, պետական տեղեկատվական ծրագրերի համաժամանակեցման իրականացում, տեղեկատվական համակարգերի փոխադարձ

						համալրում և ռացիոնալ օգտագործում. - պետական կառավարման մարմինների կողմից թվային տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում, ծախսերի կրճատում, ստացվող արդյունքի մաքսիմալացում, քաղաքացիներին տրամադրվող տեղեկատվության և ծառայությունների որակի բարելավում.
Քաղաքացիական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարելավում	1132 Քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացում	Քաղաքացիական ծառայողների մեջ հետբուհական կրթություն ունեցողների կշիռը, /տոկոս/ Արտերկրում բարձրագույն կրթություն ստացած Քաղաքացիական ծառայողների կշիռը ընդամենը Քաղաքացիական ծառայողների թվում, /տոկոս/				5-5.2 ՍՏԵՂԾԱՐԱՐ ՆԵՐՈՒԺԻ ԸՆԴՀԱՅՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ - Տնտեսական զարգացման էական ձեռքբերումներից մեկը պետք է դառնա Հայաստանի քաղաքացիների ստեղծարար ներուժի ընդլայնումը և դրա իրացումը: Նպատակային ծրագրերի իրականացման շնորհիվ՝ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու համար պետք է հասանալի դառնան այնպիսի կրթական ծրագրերը, որոնք նպաստելու են ներառյալ գիտելիքները և գործարար կարողությունները ժամանակի պահանջներին համապատասխանեց նելուն:
Աջակցել կառավարության՝ վարչապետ	1136 Հայաստանի					

տի և փոխվարչապետերի գործունեությանը	Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում						
Տեսչական վերահսկողության ապահովում	1213 Տեսչական վերահսկողության ծրագիր	Մշակված չէ					3-3.2 - ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ Հանրային յուրաքանչյուր մարմին կամ կազմակերպություն, անկախ կազմակերպաիրավա կան կամ այլ առանձնահատկություններից, պետք է գործի օրենքով սահմանված որոշակի լիազորությունների շրջանակում՝ իրականացնելով տվյալ մարմնի նպատակներին համապատասխանող և դրանցից բխող գործառույթներ. չպետք է լինեն կրկնություններ, այլընտրանքային, զուգահեռ, փոխարինող կամ թաքնված համակարգեր և (կամ) տվյալ մարմնին ոչ բնորոշ գործառույթներ: 4- 4.3ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ 4-4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 4-4.8 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ Շրջակա միջավայրի կառավարման հիմնական խնդիրն է

							նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը:
Հայաստանում տնտեսական աճին հանքարդյունաբերության ոլորտի նպաստի ամրապնդում	1214 Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր	Հանքարդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում /տոկոս/	3.2		3.2	2021	6-6.3 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ - մշակել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն և դրանից բխող միջոցառումների ծրագիր. 56 -
		Հանքարդյունաբերության ոլորտում ռազմավարության մշակմանն աջակցող փաթեթի պատրաստում, /հատ/	0		1	2020	իրականացնել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ՝ ապահովելով հանքարդյունաբերությանը զբաղվելու համար անհրաժեշտ ընթացակարգերի (լիցենզավորում, թույլտվություններ, հողօգտագործման հետ կապված կանոնակարգումներ և այլն) պարզեցում և համալիրություն, ազդակիր համայնքների բնակչության կարծիքի և բիզնեսի
		Մետաղական հանքաքարեր արդյունահանող բոլոր ընկերությունների նկատմամբ ստանդարտին համապատասխան հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմի ներդրում, /հատ/	0		1	2019	

							շահերի հավասարակշռում.
Աջակցել Հայաստանի Հանրապետությունում սննդի անվտանգության և որակի բարելավման նպատակով ծրագրերի իրականացմանը	9007 Աջակցություն սննդի անվտանգության ապահովման ծրագրերին						

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերը ըստ ծախսային գերակայությունների, որոնց հերթականությունը սահմանվել է ելնելով՝ Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներով և այլ իրավական ակտերով պատվիրակված պարտավորությունների, կնքված միջազգային պայմանագրերով ստանձնապ պարտավորությունների և Հայաստանի Հանրապետությունում առկա մի շարք խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումների առաջնահերթությունից.

1. 1136 Հայաստանի Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում
2. 1213 Տեսչական վերահսկողության ծրագիր
3. 1018 Պետական հատվածի արդիականացման ծրագիր
4. 1214 Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր
5. 1091 Հանրային իրազեկում
6. 1033 Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիությունների
7. 1078 Աջակցություն մարդասիրական ծրագրերին
8. 1132 Քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացում

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
1136 Հայաստանի Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում	Ծրագիրը ներառում է՝ մի շարք իրավական ակտերով պատվիրակված գործառնությունների և միջազգային պայմանագրերով ստանձնապ պարտավորությունների կատարմանն ուղղված

	միջոցառումներ
1213 Տեսչական վերահսկողության ծրագիր	Ծրագիրը ներառում է մի շարք իրավական ակտերով («Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի որոշումներ և այլն) պատվիրակված գործառույթների կատարմանն ուղղված միջոցառումներ
1018 Պետական հատվածի արդիականացման ծրագիր	Ծրագիրը ներառում է մրջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումներ
1214 Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր	Ծրագիրը ներառում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանում արդյունահանող ճյուղերի զարգացմանն ուղղված միջոցառումներ

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:

1. «1018» «Պետական հատվածի արդիականացման ծրագիր» ծրագրի շրջանականերում իրականացվող՝ «11001» «ՀԲ աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր», «11002» «Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում», «32001» «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» և «32002» «Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում» միջոցառումները դասվում են պարտադիր ծախսերին քանի որ իրականացվում են միջազգային պայմանագրերի շրջանակներում:

2. «1033» «Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի շրջանականերում իրականացվող «12001» «Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին» և «12002» «Աջակցություն կուսակցությունների դաշինքներին» միջոցառումները դասվում են պարտադիր ծախսերին՝ պարտադիր պարտավորության շրջանակներում հայեցողական իրավասությունների շրջանակներով, քանի որ միջոցառումներն իրականացվում են հիմք ընդունելով «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական հարտիան» ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 1-ից, Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա և

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:

3. «1091» Հանրային իրազեկում» «11002» ծրագրի շրջանականերում իրականացվող «Պետական մամուլի հրատարակում», «11003» «ԱՊՀ երկրներում հեռուստառադիո ծրագրերի հեռարձակում» և «11004» «Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ» միջոցառումները դասվում են պարտադիր ծախսերին, քանի որ միջոցառումն իրականացվում է հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության մշակութային հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության ստեղծման մասին» 1992 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագիրը:

4. «1132» «Քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացում» ծրագրի շրջանականերում իրականացվող՝ «11001» «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում» միջոցառումը դասվում է պարտադիր ծախսերին, քանի որ միջոցառումն իրականացվում է հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:

5. «1136» «Հայաստանի Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի շրջանականերում իրականացվող «11001» «Ծառայությունների, ծրագրերի համակարգում», «11004» «Աջակցություն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը», «11005» «Սպասարկման ծառայություններ», «31001» «Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում» և «31002» «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումները դասվում են պարտադիր ծախսերին, քանի որ միջոցառումներն իրականացվում են հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Պետական կառավարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ք.Մինսկում ստորագրված «2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» պայմանագիր և այլն:

6. «1213» «Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի շրջանականերում իրականացվող «11001» «Առողջապահության և աշխատանքի ոլորտում անվտանգության ապահովում», «11002» «Բնապահպանության ոլորտում անվտանգության ապահովում», «11003» «Կրթության ոլորտում որակի ապահովում», «11004» «Շուկայի վերահսկողության ծառայություններ», «11005» «Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ», «11006» «Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում անվտանգության ապահովում» և «11007» «Սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգության ապահովում» միջոցառումները դասվում են պարտադիր ծախսերին՝ պարտադիր պարտավորության շրջանակներում հայեցողական իրավասությունների շրջանակներով, քանի որ միջոցառումներն իրականացվում են հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներն ու «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ, 733-Լ, 755-Լ որոշումները:

7. «1214» «Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր» ծրագրի շրջանականերում իրականացվող «11001» «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանքարդյունաբերական ոլորտի քաղաքականության ծրագիր» և «11002» «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող, Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիր» միջոցառումները դասվում են պարտադիր ծախսերին, քանի որ միջոցառումներն իրականացվում են հիմք ընդունելով Համաշխարհային բանկի հետ կնքված՝ 2017 թվականի հուլիսի 1-ին / ԱՃԳԾԱ Հայաստանի Հանրապետության դրամաշնորհ թիվ TF0A5519/ և 2018

թվականի փետրվարի 14-ին / ԱԶԳԾԱ Հայաստանի Հանրապետության դրամաշնորհ թիվ TA0A6768/ համաձայնագրերի:

1. Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ:

1. «1033» «Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի շրջանականներում իրականացվող՝ «11001» «Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» միջոցառումը դասվում է հայեցողական ծախսերին, քանի որ միջոցառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Վարչապետի որոշումների համաձայն՝ քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և արհմիությունների ֆինանսավորման համար հայտերի ներկայացման հիման վրա:
2. «1078» «Աջակցություն մարդասիրական ծրագրերին» «11001» «Պետական աջակցություն տեղական և օտարերկրյա կազմակերպությունների կողմից իրականացվող մարդասիրական ծրագրերին» միջոցառումը դասվում է հայեցողական ծախսերին:
3. «1091» «Հանրային իրազեկում» ծրագրի շրջանականներում իրականացվող «11001» «Հանրային իրազեկման ապահովում» միջոցառումը դասվում է հայեցողական ծախսերին:
4. «1136» «Հայաստանի Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի շրջանականներում իրականացվող «11003» «Տվյալների փոխանակման միջգերատեսչական կապի ապահովում» միջոցառումը դասվում է հայեցողական ծախսերին:
5. «1213» «Տեսչականվերահսկողությանծրագիր» ծրագրի շրջանականներում իրականացվող «31001» «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում», «31002» «Կրթության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում», «31003» «Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» և «31004» «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառումները դասվում են հայեցողական ծախսերին:

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը ²	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները ³	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը ⁴
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					

² Ներկայացվում է համապատասխան միջոցառման շրջանակներում իրականացվող պարտադիր (պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) կամ հայեցողական (հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) պարտավորությունների համառոտ նկարագիրը՝ այդ թվում մատուցվող ծառայությունների, տրամադրող փարմաքերների և շահառուների շրջանակը:

³ Մյուսակերպ լրացվում է միայն պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների համար:

⁴ Մյուսակերպ կատարվում են հղումներ պատադիր ծախսային պարտավորությունները սահմանող օրենքների և միջազգային պայմանագրերի կոնկրետ դրույթների վրա, իսկ այդ պարտավորությունների շրջանակներում գործադիր մարմին վերապահված հայեցողական իրավասությունների դեպքում՝ նաև այդ իրավասությունները սահմանող իրավական ակտերի վրա: Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում կատարվում են հղումներ այդ ծախսային պարտավորությունները սահմանող իրավական ակտերի վրա:

1018	11001	ՀԲ աջակցությա մբ իրականացվ ող Պետական հատվածի արդիական ացման երրորդ ծրագիր	Միջոցառումն իր տեսակով ծառայություննե րի մատուցում է և իրականացվում է մասնագիտացվ ած միավորի կողմից		Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015թ. նոյեմբերի 18-ին ստորագրված Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի վերաբերյալ վարկային համաձայնագիր (ՊՀԱԾ3, 8539-AM)
	11002	Ռուսաստան ի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետ ությանն անհատույց ֆինանսակա ն օգնության դրամաշնոր հային ծրագրի շրջանակներ ում խորհրդատվ ական ծառայությու նների ծեռքբերում	Միջոցառումն իր տեսակով ծառայություննե րի մատուցում է և իրականացվում է մասնագիտացվ ած միավորի կողմից		

	32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում	Միջոցառումն իր տեսակով՝ Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ է և ակտիվն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների կողմից		Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015թ. նոյեմբերի 18-ին ստորագրված Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի վերաբերյալ վարկային համաձայնագիր (ՊՀԱԾՅ, 8539-AM)
	32002	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում	Միջոցառումն իր տեսակով՝ Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ է և ակտիվն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների կողմից		

1033	12001	Պետական աջակցություն ն ազգային փոքրամասն ությունների հասարակա կան կազմակերպ ություններին	Միջոցառումն իր տեսակով՝ տրանսֆերտի տրամադրում է, շահառուների ընտրությունն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետությ ան ազգային փոքրամասնութ յունների ազգամշակույթ ային կազմակերպութ յունների համակարգող խորհրդի որոշման	Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին աջակցությունը տրամադրվում է համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգամշակույթային կազմակերպությունների համակարգող խորհրդի որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N47 արձանագրային որոշման 32-րդ կետի պահանջների:	«Տարածաշրջանային կամ փոքրամասնություննե րի լեզուների եվրոպական Խարտիան» ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 1- ից Ազգային փոքրամասնություննե րի իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա
	12002	Աջակցությու ն կուսակցությ ունների դաշինքների ն	Միջոցառումն իր տեսակով՝ տրանսֆերտի տրամադրում է, շահառուների ընտրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետությ ան ազգային ժողովում ներկայացված քաղաքական կուսակցություն ների կամ կուսակցություն ների դաշինքների	Կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին ֆինանսական աջակցության չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով	«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը
1091	11002	Պետական մամուլի հրատարակ ում	Միջոցառումն իր տեսակով ծառայություննե րի մատուցում է և իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետությ ան օրենքի համաձայն ընտրված կազմակերպութ յան կողմից	Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 9-ի N 100 որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 7-ի N 623 որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1506-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության մշակութային հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

11003	ԱՊՀ երկրներում հեռուստառադիո ծրագրերի հեռարձակում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է մասնագիտացված միավորի կողմից	Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության գործունեության անարգել և ինքնուրույն իրականացման միջազգային-իրավական երաշխիքների մասին համաձայնագիրը վավերացնելու մասին» 1993 թվականի հունվարի 22-ի որոշում «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության հարցերի մասին հիմնադիր պետությունների կառավարությունների դեկլարանների որոշում» 1995 թվականի նոյեմբերի 11 Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 3-ի N Դ-1212 հանձնարարական	«Հայաստանի Հանրապետության մշակութային հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության ստեղծման մասին» 1992 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագիր
11004	Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտրված կազմակերպության կողմից	Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 14-ի N 511 որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1506-Ն որոշում	«Հայաստանի Հանրապետության մշակութային հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

1132	11001	Քաղաքացիական ծառայողներին վերապատրաստում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտրված կազմակերպության կողմից		«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդված
1136	11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Վարչապետի աշխատակազմի կողմից	Հայաստանի Հանրապետության վարչապետի «Վարչապետի աշխատակազմ ստեղծելու մասին» համար 500-Ա որոշում	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
	11004	Աջակցություն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Վարչապետի աշխատակազմի կողմից		Համաշխարհային բանկի հետ 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված համաձայնագրի / ԱՃԳԾԱ Հայաստանի Հանրապետության դրամաշնորհի թիվ TA0A6768/
	11005	Սպասարկման ծառայություններ	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Վարչապետի աշխատակազմի կողմից	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 5-ի N 666-Ն որոշում	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

	31001	Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում	Միջոցառումն իր տեսակով պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն է և իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից	Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 217-Ա որոշում	2014 թվականի հոկտեմբերի 10-ին ք.Մինսկում ստորագրված «2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» պայմանագիր
	31002	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում	Միջոցառումն իր տեսակով պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն է և իրականացվում է Վարչապետի աշխատակազմի կողմից	«Վարչապետի աշխատակազմ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի համար 500-Ա որոշում	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

1213	11001	Առողջապահության և աշխատանքի ոլորտում անվտանգության ապահովում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից	Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման շրջանակներում	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված
	11002	Բնապահպանության ոլորտում անվտանգության ապահովում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից	Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման շրջանակներում	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված
	11003	Կրթության ոլորտում որակի ապահովում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից	Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 729-Լ որոշման շրջանակներում	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված

	11004	Շուկայի վերահսկողության ծառայություններ	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից	Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 732-Լ որոշման շրջանակներում	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված
	11005	Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից	Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 732-Լ որոշման շրջանակներում	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված
	11006	Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում անվտանգության ապահովում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից	Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշման շրջանակներում	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված

	11007	Սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանի տարիայի ոլորտներում անվտանգության ապահովում	Միջոցառումն իր տեսակով ծառայություններն է մատուցում է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից	Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշման շրջանակներում	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված
1214	11001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանքարդյունաբերական ոլորտի քաղաքականության ծրագիր	Միջոցառումն իր տեսակով ծառայություններն է մատուցում է և իրականացվում է մասնագիտացված միավորի կողմից		Համաշխարհային բանկի հետ 2017 թվականի հուլիսի 1-ին կնքված համաձայնագրի / ԱՃԳԾԱ Հայաստանի Հանրապետության դրամաշնորհ թիվ TF0A5519/
	11002	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ,Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություններ դրամաշնորհային ծրագիր	Միջոցառումն իր տեսակով ծառայություններն է մատուցում է և իրականացվում է մասնագիտացված միավորի կողմից		Համաշխարհային բանկի հետ 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված համաձայնագրի / ԱՃԳԾԱ Հայաստանի Հանրապետության դրամաշնորհ թիվ TA0A6768/

Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1091	11001	Հանրային իրազեկման ապահովում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է մասնագիտացված միավորի կողմից		
1136	11003	Տվյալների փոխանակման միջգերատեսչական կապի ապահովում	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է Վարչապետի աշխատակազմի կողմից		
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1078	11001	Աջակցություն մարդասիրական ծրագրերին	Պետական աջակցություն տեղական և օտարերկրյա կազմակերպությունների կողմից իրականացվող մարդասիրական ծրագրերին		
1033	11001	Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին	Միջոցառումն իր տեսակով ծառայությունների մատուցում է և իրականացվում է հասարակական կազմակերպությունների կողմից		Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Վարչապետի որոշումների համաձայն

1213	31001	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Միջոցառումն իր տեսակով պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման շրջանակներում
	31002	Կրթության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Միջոցառումն իր տեսակով պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 729-Լ որոշման շրջանակներում

	31003	Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Միջոցառումն իր տեսակով պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 732-Լ որոշման շրջանակներում
	31004	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Միջոցառումն իր տեսակով պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն է և իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշման շրջանակներում

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

- «1033» «Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին».
- 1. «11001» «Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար

տրամադրվել է 186,849.8 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և արհմիությունների՝ վերջիններիս կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը ևս կազմում է 186,849.8 հազար դրամ:

2. «12001» «**Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին**»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 20,000.0 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների՝ վերջիններիս կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը ևս կազմում է 20,000.0 հազար դրամ:

3. «12002» «**Աջակցություն կուսակցությունների դաշինքներին**»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 103,538.7 հազար դրամ: «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2018 թվականի ընտրություններում 3 եվ ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին եվ կուսակցությունների դաշինքներին աջակցություն ցույց տալու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N-122-Ա որոշմամբ 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցները բաշխվել են ընտրությունների արդյունքում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքների միջև: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը ևս կազմում է 103,538.7 հազար դրամ:

• «1074» «**Հանրային կարծիքի ուսումնասիրություններ**»: Ծրագրի շրջանակներում իրականացվում է մեկ միջոցառում, որը իրականացումը կդադարեցվի 2020 թվականից:

1. «11001» «**Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտություններ**»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 123,278.0 հազար դրամ: Հատկացված միջոցները նախատեսված է ուղղել՝ Համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment), Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) և հասարակության կյանքի որակի վերաբերյալ հետազոտական աշխատանքների կատարմանը:

• «1078» «**Աջակցություն մարդասիրական ծրագրերին**»:

1. «11001» «**Պետական աջակցություն տեղական և օտարերկրյա կազմակերպությունների կողմից իրականացվող մարդասիրական ծրագրերին**»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 10,000.0 հազար դրամ, որը կուղղվի բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ չվերթի մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացմանը: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը ևս կազմում է 10,000.0 հազար դրամ:

• «1091» «**Հանրային իրազեկում**»: Ծրագրի շրջանակներում իրականացվում են չորս միջոցառում:

1. «11001» «**Հանրային իրազեկման ապահովում**»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 733,555.6 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը ևս կազմում է 733,555.6 հազար դրամ:

2. «11002» «**Պետական մամուլի հրատարակում**»: 2019 թվականին միջոցառման իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 83,156.9 հազար դրամ: Հատկացված միջոցները կուղղվեն 2 անուն՝ «Հայաստանի Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի հրատարակմանը: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը ևս կազմում է 83,156.9 հազար դրամ:

3. «11003» «**ԱՊՀ երկրներում հեռուստառադիո ծրագրերի հեռարձակում**»: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 175,500.0 հազար դրամ: «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի համաձայն, «Միր» ՄՀՌԸ ՀՀ ազգային մասնաճյուղի ֆինանսավորումը չի ավելացել, պահպանվել է 2018 թ.-ի ֆինանսավորման չափով և գումարը մասնաճյուղին տրամադրվել է դրամաշնորհի տեսքով՝ համաձայն 2019 թ.-ի փետրվարի 15-ին կնքված

դրամաշնորհի տրամադրման N 88 պայմանագրի, այնինչ, ըստ էության այն իրենից ներկայացնում է պետության կողմից տրամադրվող մասնաբաժին: Ուստի, հետագայում բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածները ձևավորելիս անհրաժեշտ է անդրադառնալ վերոնշյալ հարցին: Ըստ «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերություն ՓԲԸ-նկերության կանոնադրության բաժնետերպետություններիցյո րաքանցյուրը պարտավոր է ֆինանսավորել «Միր»

Միջպետական Հեռուստառադիոընկերություն ՓԲԸ-նկերության գործունեության ապահովման համար անհրաժեշ տծախսերի իրմասնաբաժինը:

Բաժնետերպետություններիցյուրաքանցյուրի վճարման ենթակա պետական մասնաբաժնի չափը որոշվում է «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերություն ՓԲԸ-նկերության գործունեության ապահովման համար անհրաժեշ տտարեկանն ախահաշվով հաստատված ծախսերի և «Հաշվարկային բանալու/Расчетный ключ» արտադրյալին: Յուրաքանչյուր բաժնետերպետության համար «Հաշվարկային բանալին/Расчетный ключ»

որոշվում է բաժնետերբոլոր պետությունների բնակչության ընդհանուր բնակիչների մեջ տվյալ բաժնետերպետությ ան բնակչության տեսակարար կշռով: Սույն ծրագրով 2020-2022 թթ. աճը պայմանավորված է համաձայն ՀՀ Նախագահի 03.07.07թ. N Դ-1212 հանձնարարականի կատարման ապահովման հետ: Նախատեսվող 10% աճին համապատասխան գումարը՝ 2020 թ-ին ուղղվելու է աշխատավարձերի, տրանսպորտային միջոցի և վարչական սարքավորումների, իսկ 2021-2022 թթ.-ին վարչական սարքավորումների ձեռքբերմանը: «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերությունը հայկական բաժնե-մասով միակօտարալեզու հեռուստառադիոընկերությունն է,

որը հեռարձակվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և փոխադարձ հնարավորություն է տալիս ինչպես ԱՊՀ-ում, այնպես էլ Հայաստանի բնակչությանը՝ ծանոթանալ հայկական մշակույթին և մշակութային արժեքներին, այնպես էլ Հայաստանի բնակչությանը՝ ծանոթանալ ԱՊՀ մյուս պետությունն րի մշակույթին և մշակութային արժեքներին: Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ԱՊՀ-ի, ՀԱԴԿ-ի, ԵԱՏՄ-ի անդամ պետությունն «Միր»

Միջպետական Հեռուստառադիոընկերությունը միակ հեռուստառադիոընկերությունն է, որը տարածվում է վերոնշյալ կազմակերպությունների բոլոր անդամ պետությունների տարածքներում, ունի շատ լայն և բազմերանգ լսարան, որի քանակը կազմում է մոտ 240 մլն. մարդ: Այսպիսով ՀՀ ազգային մասնաճյուղը մենթորյա առեժնոմով ներկայացնում է հայկական մշակույթը, պատմությունը, սպորտը, զբոսաշրջային և տեսարժան վայրերը, գործարար միջավայրը և այլ կարևորագույն իրադարձությունները՝ ստեղծելով տեղեկատվական այնպիսի դաշտ, որը թույլ է տալիս ներկայացնել մեր երկրի գրավչությունը և հմայքը:

Այս ամենի արդյունքում զբոսաշրջի կներմծծող աքա հովվում դեպի մեր երկիր, իսկ օտարերկրյա գործարարներն ու ներդրողները առավել խստակն ճիշտ պատկերացում են կազմում ՀՀ տնտեսությ ան մասին: Հայաստանի Հանրապետությունը՝ լինելով «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության բաժնետեր, չունի այլ նմանատիպ տեղեկատվական հարթակ և՛ հանդիսանալով «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության համասեփականատեր, ունի բացառիկ հնարավորություն սահմանել հեռուստառադիոընկերության քաղաքականությունը: «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության բաժնետեր է հանդիսանում նաև Ադրբեջանի Հանրապետությունը և նախաձայն հանգամանքին, որ «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության Ադրբեջանի ներկայացուցչության ֆինանսավորումը ավելի քան եռա կիանգամ գերազանցում է ՀՀ ազգային մասնաճյուղի ֆինանսավորմանը՝ ՀՀ ազգային մասնաճյուղի արտադրական ծավալները գերազանցում է Ադրբեջանի ներկայացուցչությանը՝ թերթական, թեքանակական ցուցանիշներով: Ծրագրի չիրականացման դեպքում Հայաստանի Հանրապետությունը կզրկվի մոտ 240 մլն. լսարան ունեցող հեռուստառադիո հարթակով մեր երկրի պետական շահերից բխող տեղեկատվության տարածման հ նարավորությունից: Հայաստանի Հանրապետությունը ունի Արցախի հիմնախնդիր, ծրագրի ֆինանսավորման պակասեցումը կամ դադարեցումը կհանգեցնի Ադրբեջանական քարոզչամեքենայի ան խոչընդոտ տարածմանը, իսկ Ադրբեջանի Հանրապետությունը բացառիկ հնարավորություն ձեռք բերի ամբողջ տեղեկատվական հարթակը օգտագործելի ընդահերին ծառայեցնելու համար, մինչդեռ ՀՀ ազգային մասնաճյուղը հանդիսանում է հակաշփոխառավելագույն սխոչընդոտում և զսպում է նմանատիպ փորձե րը: Ծրագրի իրականացման արդյունքների գնահատականը արտահայտվում է յուրաքանչյուր տարի հեռուստառադ ի լսարանի փաճով, որը ուղեկցվում է հեռուստառադիոընկերության նկատմամբ վստահության մեկ համակրանքով: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 193,050.0 հազար դրամ:

4. «11004» **«Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 96,848.8 հազար դրամ: Միջոցառումը հնարավորություն է տալիս բանկային, ֆինանսական, առևտրային, արտադրության, շինարարական, կապիտալիստական, առևտրային, ապահովել պատմական նշանակություն ունեցող նյութերի պահպանումն արխիվացումը: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 96,848.8 հազար դրամ:

• «1132» **«Քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացում»:** Ծրագիր շրջանակներում իրականացվում է մեկ միջոցառում:

1. «11001» **«Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 9,405.8 հազար դրամ 700 քաղաքացիական ծառայողի վերապատրաստման համար: Նշված գումարը հաշվարկվել է վերապատրաստման 72 ժամյա ծրագրի համար, հետևաբար մեկ քաղաքացիական ծառայողի մեկ ժամի արժեքը 2019 թվականին կազմել է 186.6 դրամ:

Հաշվի առնելով, որ այս պահի դրությամբ քաղաքացիական ծառայողների հստակ թվաքանակը հայտնի չէ, ենթադրվում է, որ 2020 թվականին այն կկազմի մոտավորապես 9500 և քանի որ 2019 թվականին մեկ քաղաքացիական ծառայողի մեկ ժամի վերապատրաստման արժեքը կազմել է 186.6 դրամ, առաջարկում ենք քաղաքացիական ծառայողների 2020 թվականի վերապատրաստման համար նախատեսել 28,424.0 հազար դրամ ($9.500 \times 16 \times 187 = 28,424.0$): Նշված գումարը նախատեսվում է վերապատրաստման 24 կոմպետենցիայի (ծրագրի) համար: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 28,424.0 հազար դրամ:

• «1136» **«ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»:** Ծրագիր շրջանակներում իրականացվում է յոթ միջոցառում:

1. «11001» **«Ծառայությունների, ծրագրերի համակարգում»**

2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 4,564.942.6 հազար դրամ, որի շրջանակներում իրականացվում են Վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերը:

2. «11003» **«Տվյալների փոխանակման միջգերատեսչական կապի ապահովում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 612,680.0 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների և ուսումնական հաստատությունների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 670,960.0 հազար դրամ:

3. «11004» **«Աջակցություն ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 23,600.0 հազար դրամ: Հատկացված գումարն ամբողջությամբ ուղղվում է աշխատանքի վարձատվության՝ 3 հաստիքի համար: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվելիք գումարի հաշվարկը ներկայացված է հայտին կից նախահաշվում, որն իր մեջ ներառում է քարտուղարության փորձագետների աշխատանքի վարձատրության ծախսերը: Համաշխարհային բանկի հետ 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված համաձայնագրի համաձայն ծրագիրն իրականացվելու է մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը, սակայն հնարավոր է վերջնաժամկետի երկարաձգում: Բանակցություններ են ընթանում նաև

դոնոր այլ կազմակերպությունների հետ (ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԶԾ հայաստանյան ներկայացուցչություն, GIZ և այլն) առաջիկա տարիներին Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանը և ընդգրման ընդլայնմանը ուղղված ծրագրերի իրականացման ուղղությամբ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 23,600.0 հազար դրամ:

4. «11005» «Սպասարկման ծառայություններ»: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 462,558.5 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը ևս կազմում է 462,558.5 հազար դրամ:

«Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020-2022 թվականներին կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

- Կառավարական N 1 շենքի ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող այլ տարածքների ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ,
- ապահովել Կառավարական N 1 շենքի ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող այլ տարածքներում շենքային պայմանների հետ կապված ընթացիկ աշխատանքներ,
- Կառավարական N 1 շենքի ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող այլ տարածքների շինությունների աշխատանքային պայմանների բարելավում,
- բարձրացնել «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից սպասարկվող տարածքների սպասարկման որակը՝

նպաստավոր երկար գալստանաներ ստեղծելով սպասարկվող շենքերում:

5. «31001» «Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը ՀՀ անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում»:

Տարի	Տրամադրող մարմինը	Գումարը (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսը	Կատարված աշխատանքները	Ծանոթություն
2019թ.	Վարչապետի աշխատակազմ	92.132.000		1. Red Hat Enterprise Linux Server 2 sockets, 1 physical or 2 virtual nodes Standard Subscription և Redhat High Availability Add-On 2. CISCO արտոնագրերի կառավարման փաթեթներ (1 տարի ժամկետով) 3. Սերվերներ 4. ԵԱՏՄ շրջանակներում էլ. փաստաթղթաշրջանառության ն ծրագրային ապահովում 5. Աշխատարժ (ԵԱՏՄ բաժնի 4 աշխատակցի համար)	
2020թ.	Վարչապետի աշխատակազմ	98.161.200		1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում 3. Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում 4. ԵԱՏՄ շրջ. էլ. փաստ. ծրագրային ապահովում	
2021թ.	Վարչապետի աշխատակազմ	89.161.200		1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում	

				3. Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում 4. ԵԱՏՄ շրջ. էլ.փաստ. ծրագրային ապահովում	
2022թ.	Վարչապետի աշխատակազմ	89.161.200		1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում 3. Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում 4. ԵԱՏՄ շրջ. էլ.փաստ. ծրագրային ապահովում	

2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 98,161.2 հազար դրամ:

7.«31002» «ՀՀ վարչապետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում»: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 63,033.3 հազար դրամ: Վարչապետի աշխատակազմի ձևավորման և մի շարք պետական մարմինների լուծարման կամ վերակազմավորման արդյունքում ավելացել են վարչապետի աշխատակազմի հաստիքները և անհրաժեշտություն է առաջացել գույքի, սարքավորումների ձեռքբերման: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 100,000.0 հազար դրամ:

• **«1213» «Տեսչական վերահսկողության ծրագիր»** Ծրագիր շրջանկաներում իրականացվում է յոթ՝ ծառայությունների մատուցում և չորս պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն միջոցառում:

1. **«11001» «Առողջապահության և աշխատանքի ոլորտում անվտանգության ապահովում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 1,045,634.7 հազար դրամ: Տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվությունը բարձրացնելու և հավանական խախտումները բացառելու կամ նվազեցնելու նպատակով Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի 1-ին եռամսյակում իրականացվել են 284 խորհրդատվական գործունեություն և իրազեկման աշխատանքներ, որի ընթացքում պարզաբանվել են ոլորտները կանոնակարգող և ՀՀ տարածքում գործող իրավական ակտերի պահանջները: Նշված բնագավառների շրջանակներում իրականացվել են նաև 518 կանխարգելիչ գործողություններ, ինչպես նաև կանխարգելիչ գործողություններ իրականացվել են Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում՝ իրականացնելով սանիտարա-կարանտինային հսկողություն (ջերմաչափում, վիզուալ զննում), անհրաժեշտության դեպքում՝ հարցում: ՍԲՀ-ները իրենց հասանելի բոլոր միջոցով մշտապես հետևել են այլերկրներում համաճարակաբանական իրավիճակի նվազանցմանը, առկայության դեպքում նրանց հնարավոր տարածման ուղիներին: Իրականացվել են ժամանաժամանակ օդանավերում կանխարգելիչ գործողություններ 389,037 ուղևորների շրջանում, ավտոտրանսպորտային միջոցներում և 44 գնացքներում հսկողության ենթարկված ուղևորների թիվը կազմել են 265,223, այդ թվում բեռնատար գնացքների հսկողության ենթարկված 950 անձնակազմին, իրականացվել են նաև վիզուալ զննում: Հայտնաբերվել են վարակիչ հիվանդության ախտանշաններով 166 անձ և համաճարակային տեսանկյունից անապահով տարածքներից ժամանած 22 ուղևոր: Նշված անձանց նկատմամբ սահմանվել է համապատասխան հսկողություն:

2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 1,286,761.4 հազար դրամ:

2. **«11002» «Բնապահպանության ոլորտում անվտանգության ապահովում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 874,510.8 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 895,056.1 հազար դրամ:

3. **«11003» «Կրթության ոլորտում որակի ապահովում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 218,807.1 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 235,368.8 հազար դրամ:

4. **«11004» «Շուկայի վերահսկողության ծառայություններ»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 178,673.1 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 179,916.1 հազար դրամ:

5. **«11005» «Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 15,000.0 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 35,000.0 հազար դրամ:

6. **«11006» «Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում անվտանգության ապահովում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 953,381.7 հազար դրամ: Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակ (այսուհետ նաև՝ Գրասենյակ) ներկայացվել են քաղաքաշինության, տրանսպորտի, էներգետիկայի, տեխնիկական և հրդեհային անվտանգության, գեոդեզիայի, հողօգտագործման և քարտեզագրության բնագավառներում գործող և Տեսչական մարմնի լիազորություններին առնչվող այն իրավական ակտերի ցանկը, որոնցում անհրաժեշտ է լրացումներ և փոփոխություններ կատարել: Իսկ Տեսչական մարմնի կողմից մշակվել և Գրասենյակ է ներկայացվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները միտված են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերացմանը, բացահայտված ռիսկերի նվազեցմանը և Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովմանը: Նախատեսված հիմնական միջոցառումները ներառում են.

1. Օրենսդրական դաշտի կարգավորում. Տեսչական մարմինն իր լիազորությունները և կանոնադրական գործառնություններն ամբողջական ծավալով իրականացնելու համար կարիք ունի օրենսդրական դաշտի հստակ կանոնակարգման:

2. Առաջարկություններ ներկայացնել մեկ տասնյակից ավելի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

3. Տեսչական մարմնի կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման ապահովում. ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ համատեղ նախատեսվում է մշակել և Տեսչական մարմնի կառավարման խորհրդի

հաստատմանը ներկայացնել Տեսչական մարմնի ծառայողների վերապատրաստման տարեկան ծրագիրը:

Նախատեսվում է նաև միասնական աշխատելաժողովի նպատակով Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացնել տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում: Նախատեսվում է ակտիվ համագործակցություն պետական մարմինների և կրթական հաստատությունների հետ:

4. Վերահսկողության իրականացում. Իրավական հիմքերի ապահովման դեպքում (Ռիսկի մեթոդաբանության, ստուգաթերթերի, ստուգումների տարեկան ծրագրի հաստատում) օրենսդրության համաձայն նախատեսվում են իրականացնել ստուգումներ: Մինչ ստուգումների գործընթացը սկսելը՝ ստացված բողոքների, դիմումների, ինչպես նաև վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա, «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կիրականացվի համապատասխան վարչարարություն:

5. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ: Առաջնահերթություն ունեցող կարևորագույն միջոցառումներից է Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների, մասնավորապես, և հանրության, ընդհանրապես, իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Այս համատեքստում նախատեսվում է օգտագործել ՁԼՄ-ների և սոցիալական ցանցերի հնարավորությունները, ինչպես նաև կարևորվում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի ամբողջական գործարկումն ու տեղեկատվական սպասարկումը:

2020-2022 թվականների համար Տեսչական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառների գծով ֆինանսական պահանջների գերակշիռ մասը՝ շուրջ 85,4 տոկոսը կազմում է աշխատանքի վարձատրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայություններն մատուցվում են ողջ ՀՀ տարածքով՝ նախատեսվել են նաև ներքին գործուղումների գծով ծախսեր, որը կազմում է ընդհանուր ծախսի շուրջ 0,9 տոկոսը: Հարկ է նշել, որ գործառույթների իրականացման համար Տեսչական մարմնին անհրաժեշտ է նաև ընթացիկ ծախսեր՝ էներգետիկ, կոմունալ, կապի, համակարգչային, աշխատակազմի մասնագիտական զարգացման և տեղեկատվական ծառայությունների, գույքի և սարքավորումների վարձակալության, ապահովագրական ներկայացուցչական ծախսերի, ընդհանուր բնույթի և մասնագիտական ծառայությունների, շենքերի և կառույցների և մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման, գրասենյակային նյութեր և հագուստի՝, տրանսպորտային նյութերի, կենցաղային և հանրային սննդի նյութերի, այլ ծախսերի կատարման համար, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի շուրջ 8,1 տոկոսը: Տեսչական մարմնի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով խիստ անհրաժեշտ են ֆինանսական ծախսերի մեջ ներառել նաև վարչական սարքավորումներ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածով, համապատասխանաբար հիմնական միջոցներ ձեռքբերման, որի գումարը կազմում է ընդհանուր ծախսերի ոչ ավել քան 6,5 տոկոսը: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում 872,785.7 հազար դրամ:

7. «11007» «Սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգության ապահովում»: Տեսչական մարմնի կողմից 2019թ., ինչպես նաև 2020-2022թթ. ժամանակահատվածում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել, քանի որ մարմինը գտնվում է վերակազմավորման փուլում:

2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 1,142,151.5 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 1,171,421.3 հազար դրամ:

8. «31001» «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»: 2018 թվականին միջոցառման իրականացման համար հատկացվել է 8,589.90 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 8,370.22 հազար դրամի ծախս, իսկ 2019 թվականին հատկացվել է 31,567.8 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 33,864.0 հազար դրամ:

9. **«31002» «Կրթության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 3,000.0 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 4,540.0 հազար դրամ:

10. **«31003» «Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 1,940.0 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 18,420.0 հազար դրամ:

11. **«31004» «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում»:** Միջոցառմանը 2019 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 72.000.0 հազար դրամ անհրաժեշտ գույք և տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար: Միջոցառման շրջանակներում հատկացված գումարը ուղղված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարողությունների զարգացմանն ու տեխնիկական հագեցվածության բարելավմանը: Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին), ձևավորվելով ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ: Աշխատակիցներով սկսել է համալրվել 2018 թվականի դեկտեմբերի 3-ից: Այժմ Տեսչական մարմինը աշխատակիցներով համալրված է մասնակի, քանի որ ամբողջությամբ համալրվելու համար չկան համապատասխան պայմաններ՝ գրասեղաններ, աթոռներ, համակարգիչներ և Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ այլ գույք: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 60,525.0 հազար դրամ՝ նախատեսվում է անհրաժեշտ կապիտալի ձեռքբերումը ամբողջությամբ համալրել 2020 թվականին:

• **«1018» «Պետական հատվածի արդիականացման ծրագիր»:** Ծրագիր շրջանակներում իրականացվում է չորս միջոցառում:

1. **«11001» «ՀԲ աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր»:** 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 694,408.3 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 1,202,459.8 հազար դրամ: **2019 թվականի ընթացքում նախատեսվում է սկսել և 2020 թվականին ավարտել հետևյալ աշխատանքները.**

1. Նախատեսվում է մշակել Քաղաքացիական ծառայության ոլորտում կարիքների վրա հիմնված վերապատրաստման համակարգը,

2.

Նախատեսվում է օժանդակել Հայաստանի Պետական Կառավարման Ակադեմիայի կարողությունների զարգացմանը՝ քաղաքացիական ծառայության ոլորտում շարունակական վերապատրաստում ապահովելուն պատասխով:

Ծրագրի շրջանակներում կատարվում են ծախսեր, որոնք ուղղված են ծրագրի մոնիթորինգին և հաշվետվությունների մշակմանը, գնումների փաստաթղթերի կազմման հարցում շահառուների կողմից եղած աջակցության հիման վրա տեխնիկական պահանջների/մասնագրերի մշակմանը և գնումների գործընթացի վերահսկմանը ու ծրագրի միջոցառումներն իրականացնող մարմինների խորհրդատվական ծառայություններին: Կազմակերպվում են նաև շահառուների վերապատրաստումներ, ֆինանսական աուդիտի, մոնիթորինգի և գնահատման, հանրային իրազեկման հնարավոր արշավների և քաղաքացիների

ու քաղաքացիական հասարակության հետ գենդերային հարցերի հետ կապված քննարկումներին առնչվող աշխատանքներ:

2. «11002» «**Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում**»: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 57,627.6 հազար դրամ:

3. «32001» «**Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում**»: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 1,861,684.2 հազար դրամ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 7,244,064.7 հազար դրամ: 2019 թվականի ընթացքում նախատեսվում է սկսել և 2020 թվականին ավարտել հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ոստիկանության համար օպերատիվ կառավարման պիլոտային համակարգերի (ծրագրային ապահովում) մատակարարումը և տեղադրումը (մարզերում), ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերումը:

2. Ծրագրային ապահովման միջոցով իրականացնել համակարգերի ինտեգրում, փոխգործելիություն, փոխկապակցվածություն (X-Road կամ կենտրոնացված) և անվտանգության չափանիշների գործարկում, ինչպես նաև ձեռք բերել տվյալների իրապահուստավորման (Back-up) կենտրոնի համար սարքավորումներ:

3. Նախատեսվում է մշակել քրեական գործերի մինչդատական վարույթի էլ. կառավարման համակարգի ծրագրային ապահովում, որը հնարավոր կդարձնի քրեական գործերի էլեկտրոնային ղեկավարումը, որտեղ ներգրավված կլինեն դատախազներ, քննիչներ, պաշտպաններ, դատավորներ, դատական փորձագետներ:

2020 թվականի ընթացքում նախատեսվում է նաև իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Մշակել Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS) ծրագրային ապահովում և ձեռք բերել համապատասխան սարքավորումներ (պետական ֆինանսների կառավարման առանձին մոդուլների՝ բյուջե, գանձապետարան, պետական պարտք, էլ. գնումներ, հաշվապահություն և այլն լրամշակում և ինտեգրում մեկ միասնական համակարգում)

- Մշակել էլ. լիցենզավորման համակարգի ծրագրային ապահովում, որով կավտոմատացվի պարզ լիցենզիաների տրամադրման գործընթացը, տվյալների էլեկտրոնային մշակումը, լիցենզիաների էլեկտրոնային շտեմարանի վարումը, հաշվետվությունների ընդունումը, ծանուցումը և այլն:

4. «32002» «**Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում**»: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 1,560,747.5 հազար դրամ:

12. «1214» «**Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր**» Ծրագրի շրջանակներում իրականացվում է երկու միջոցառում:

1. «11001» «**Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանքարդյունաբերական ոլորտի քաղաքականության ծրագիր**»: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Հայաստանի Հանրապետության Դրամաշնորհ թիվ TFOA5519 («Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագիր») ծրագրով նախատեսված միջոցառումները դասվում են հայեցողական ծախսերին: Համաշխարհային բանկի հետ 2017 թվականի հուլիսի 1-ին կնքվել է համաձայնագիր ծրագրի իրականացնելու համար, որի վերջնաժամկետը սահմանված է 2020 թվականի ապրիլի 30-ը, սակայն հնարավոր է վերջնաժամկետի երկարաձգում: Ծրագրի շրջանակում իրականացվող հիմնական միջոցառումներն են հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական ազդեցության գնահատում, հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատում,

կարողությունների զարգացում և հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակում: 2020 թվականին նախատեսվում է իրականացնել ծրագրով սահմանված հանքարդյունաբերության ռազմավարության մշակումը: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 123,616.5 հազար դրամ:

2. «11002» «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիր»: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 99,743.8 հազար դրամ: 2019 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրի շրջանակում կմշակվի Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցը, որը տեղական և միջազգային հանրությանը կներկայացվի 2020 թվականի հունվարին նախատեսվող համաժողովի ընթացքում: 2019 թվականին կմշակվի ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրությունը: 2019 թվականին կմշակվեն իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը և կստեղծվի իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովումը, որոնց իրականացման համար Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրով նախատեսվել է 99,743.8 հազար դրամ (1214): Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գյուղավ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակներում 2019 թվականին կիրականացվեն մի շարք միջոցառումներ՝ մարզային այցելություններ, տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրություն, Հայաստանի նախավավերացման և վավերացման գործընթացին փորձագիտական աջակցություն, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրության մշակման և լավագույն փորձի փոխանակման աշխատանքներին աջակցություն, Հայաստանը 2019 թվականի հունիսի 17-19 կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային կոնֆերանսին ներկայացման և Ազգային նորարարական էքսպոյում ներկայանալու աշխատանքներին աջակցություն, ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակում տարածաշրջանային համագործակցության և փորձի փոխանակման և այլ աշխատանքներ, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտման թեմայով հանրային իրազեկման միջոցառում: 2020 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրի գործողության ժամկետի հնարավոր երկարաձգման պայմանում կմշակվի Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ զեկույցը, կիրականացվեն հանրային լուսաբանման և կարողությունների զարգացման միջոցառումներ: 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հայտով նախատեսվող գումարը կազմում է 57,210.2 հազար դրամ:

4.3. Նոր նախաձեռնությունները

- **«1213» «Տեսչական վերահսկողության ծրագիր»** ծրագիր շրջանակներում առաջարկվող նոր միջոցառումներն են.

1. Հիմք ընդունելով «Հանրային խորհրդ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը «1136» «Հայաստանի Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի շրջանակներում որպես նոր նախաձեռնություն ներկայացնում ենք «Հանրային խորհրդի բնականոն գործունեության» ֆինանսական միջոցներով ապահովում» միջոցառումը

Հանրային խորհուրդը ստեղծվել է 2009 թվականին իբրև Հայաստանի Հանրապետության նախագահին կից խորհրդակցական մարմին: Հանրային խորհրդի բոլոր ծախսերը ներառված են եղել նախագահի աշխատակազմի բյուջետային ծախսերի մեջ: 2018 թվականի մարտի 7-ին Ազգային ժողովն ընդունել է «Հանրային խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սահմանվում է խորհրդի գործունեությունը՝ իբրև Հայաստանի Հանրապետության կառավարության խորհրդակցական մարմին:

Հանրային խորհրդի հիմնական նպատակն է հնարավորություն տալ հասարակությանը ազդել իշխանության կողմից վարվող քաղաքականության վրա, իսկ իշխանությանը՝ իր գործողություններն ուղղորդել հասարակության պահանջներին համընթաց:

2017 և 2018 թվականներին Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից Հանրային խորհրդի ընթացիկ տարվա բյուջետային ծախսերի համար նախատեսվել է 60,000.0 հազար դրամ: Գումարը ծախսվել է հետևյալ ուղղություններով՝ Հանրային խորհրդի գրասենյակի տարածքի վարձակալություն, միջազգային 2 կառույցներին անդամակցության պարտադիր տարեկան վճարներ, գործուղումներ, հանրային քննարկումների և նիստերի անցկացում, ծառայողական մեքենայի սպասարկում:

2019 թվականին շրջանառության մեջ դրված որոշման նախագծով, որը բխում է «Հանրային խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլխի Հոդված 11-ի 2-րդ և 3-րդ կետերից, ընթացքի մեջ է Հանրային խորհրդին 7,500.0 հազար դրամ հատկացնելու գործընթացը, նշված բյուջեի սահմանում նախատեսված են հետևյալ ծախսերը՝ միջազգային երկու կազմակերպություններում (AICESIS, UCESIF) Հանրային խորհրդի անդամակցության տարեկան պարտադիր վճարներ, Հանրային խորհրդի և Հանրային խորհրդի հանձնաժողովների նիստերին մարզերից եկող Հանրային խորհրդի անդամների և հանձնաժողովների անդամների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, նիստերի կազմակերպում մարզերում, միջազգային համաժողովներին Հանրային խորհրդի անդամների մասնակցության ապահովում, Հանրային խորհրդի միջազգային գործընկեր կառույցներից պատվիրակությունների ընդունում Հայաստանում, խորհրդի ընդլայնված կազմով նիստերի և հանրային լայն քննարկումների կազմակերպման նպատակով դալիճների վարձակալություն, նոր կայքի ստեղծում, կայքի տեղեկատվության թարգմանություն երկու լեզուներով, խորհրդի գրասենյակը ինտերնետով և ֆիքսված հեռախոսակապով ապահովում, նոր բլանկների և ծրարների պատվիրում: 2020-2022 **թվականներին Հանրային խորհրդի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ են հետևյալ ծախսերը**՝ միջազգային երկու կազմակերպություններում (AICESIS, UCESIF) Հանրային խորհրդի անդամակցության տարեկան պարտադիր վճարներ, Հանրային խորհրդի և Հանրային խորհրդի հանձնաժողովների նիստերին մարզերից եկող Հանրային խորհրդի անդամների և հանձնաժողովների անդամների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, նիստերի կազմակերպում մարզերում, միջազգային համաժողովներին Հանրային խորհրդի անդամների մասնակցության ապահովում, խորհրդի միջազգային գործընկեր կառույցներից պատվիրակությունների ընդունում Հայաստանում, խորհրդի ընդլայնված կազմով նիստերի և հանրային լայն քննարկումների կազմակերպման նպատակով դալիճների վարձակալություն, բլանկների և ծրարների պատվիրում, կայքի սպասարկում, գրասենյակի ֆիքսված հեռախոսակապի և ինտերնետ ծառայության դիմաց ամսական վճարներ: 2020-2022 թվականներին միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար կազմում է 12,000.0 հազար դրամ:

2. «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ ստեղծելու մասին ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1635-Ա որոշման, ինչպես նաև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 7.2, 7.6, 7.7 հոդվածների համաձայն՝ որպես նոր նախաձեռնություն, «1136» «Հայաստանի Հանրապետության Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի շրջանականերում ներկայացնում ենք «ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքի սպասարկում և շահագործում, բարձրաստիճան պաշտոնատար անձանց կեցության ապահովում» միջոցառումը:

• «1136» «ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագիր շրջանականերում առաջարկվող նոր միջոցառումներն են.

3. Տեսչական մարմնի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով խիստ անհրաժեշտ են ֆինանսական ծախսերի մեջ ներառել նաև կապիտալ բնույթի հիմնական միջոցառումների գծով ծախսերը՝ այլ մեքենաներ և սարքավորումներ՝ <5129> և ոչ նյութական հիմնական միջոցներ՝ <5132> բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով, համապատասխանաբար հիմնական միջոցներ (համակարգչային սարքավորումների, գրասենյակային գույքի ձեռքբերման) և ծրագիր ձեռք բերելու համար: Հարկ է նշել, որ Տեսչական

մարմնի համար կապիտալ բնույթի հիմնական միջոցառումների գծով ծախսերը օրհասական է և շատ անհրաժեշտ, ինչպես նաև ներառվել է սահմանափակ նվազ և խիստ անհրաժեշտ չափով: Նշվածների վառ ապացույցն է այն հանգամանքը, որ Տեսչական մարմնին օգտագործման իրավունքով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գույքը (միջոցները բավարար չեն՝ քանակապես քիչ լինելու և բարոյական մաշվածության առումով), որը ոչ ամրակցած է և ոչ էլ հաշվառված է Տեսչական մարմնի հաշվեկշռում: Տեսչական մարմինը ելնելով իրեն վերապահված կանոնադրական գործառույթների իրականացման (մասնավորապես հիվանդությունների կանխարգելման) համար բավարար գործիքներ ունենալու հանգամանքից, բազմիցս ներկայացրել է հրատապությունն ու անհրաժեշտությունը ռեֆերենս լաբորատորիա ունենալու վերաբերյալ և արդեն իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության» թիվ 1030-Լ որոշման հավելված 1-ով սահմանվել է միջոցառման իրականացմանն ուղղված քայլերը և ակնկալվող արդյունքը: Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտների անձնագրային տվյալները, ոլորտային և անհատական ռիսկի չափորոշիչները հաշվառելու, բնագավառների ռիսկերը բացահայտելու, ըստ բնագավառների և ռիսկայնության խմբերի (բարձր, միջին, ցածր դասակարգելու) վերլուծելու, ըստ գործունեության ոլորտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների, Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառներում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազա վարելու, ստուգման արդյունքում համապատասխան տվյալների (խախտման տեսակ, ստուգման ժամանակահատված և այլն) հաշվառելու, վարչական վարույթի վերաբերյալ գործերի վարման և ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար դրանցում առկա տեղեկությունների, փաստաթղթերի և այլ նյութերի մասին արագ ու հեշտ իրազեկման հնարավորությունը ապահովելու, վարչական ակտով տրված առաջադրանքների կատարման նկատմամբ հսկողության ապահովելու, իրավախախտումների համար վարչական տույժերի սահմանման, դրանց համաչափ կիրառումն ապահովելու, ինչպես նաև հաշվետվողականությունն ապահովելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ծրագիր՝ Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառներում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների (ըստ գործունեության ոլորտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների) տվյալների բազա՝ էլեկտրոնային շտեմարան ունենալու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը (ՇՎՏՄ) սեփականության իրավունքով զբաղեցնում է Երևան քաղաքի Կոմիտաս 49/2 հասցեում գտնվող շենքի երկրորդ և երրորդ հարկերը, համապատասխանաբար՝ 833.3մ2 և 225.0մ2 մակերեսներով: Տեղեկացնում ենք, որ ՇՎՏՄ-ի նշված երրորդ հարկի 225.0մ2 մակերեսով տարածքը հիմնանորոգման կարիք ունի, ինչի համար անհրաժեշտ է 25,000.0 հազար դրամ:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

«9007» «Աջակցություն սննդի անվտանգության ապահովման ծրագրերին»:

